

**«ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԳՈՐԾԱՐԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**1. ՆԱԽԱԲԱՆ**

1.1. «Մետա-Իքս Մարկետս» ՓԲԸ-ն (այսուհետ «Ընկերություն», «մենք» կամ «մեզ»), Հայաստանի Հանրապետությունում գրանցված և լիցենզավորված (լիցենզիայի համար 0024) ներդրումային ընկերություն է: Ընկերության գործունեությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ-ում արժեթղթերի շուկան և ներդրումային ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով, Ընկերության ներքին կանոնակարգերով:

Մենք լիցենզավորված ենք և վերահսկվում ենք ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա մենք իրավունք ունենք մատուցել սույն փաստաթղթի 3-րդ կետում նշված ներդրումային ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»):

1.2. Ընկերության ամբողջական Ֆիրմային անվանումն է՝ «Մետա-Իքս Մարկետս» փակ բաժնետիրական ընկերություն, պաշտոնական վեբկայքն է՝ [www.mxm.am](http://www.mxm.am) (այսուհետ նաև՝ Ընկերության վեբկայք): Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 312 սենյակ:

1.3. Սույն Համաձայնագրում «Հաճախորդ» հասկացությունն օգտագործելով ի նկատի ունենք Ձեզ (ցանկացած ֆիզիկական՝ այդ թվում անհատ ձեռնարկատեր հանդիսացող, և/կամ իրավաբանական անձ), ում Ընկերության կողմից մատուցվում են ներդրումային ծառայությունները:

1.4. Հաճախորդի և Ընկերության միջև իրավահարաբերությունները կարգավորվում են սույն Գործարար հիմնական պայմաններով (այսուհետ նաև՝ «Հիմնական պայմաններ», «Համաձայնագիր», «Պայմանագիր»), ինչպես նաև վերջինիս փոփոխություններով, որոնք իրականացվում են սույն Հիմնական պայմաններով սահմանված կարգով: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է միանալու պայմանագիր Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով (այսուհետ նաև «Միանալու պայմանագիր»): Սույն Համաձայնագիրը հրապարակային առաջարկ (օֆերտա) չէ: Ընկերության և Հաճախորդի (այսուհետ նաև «Կողմերի») միջև համագործակցության պայմանները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որի համաձայն Համաձայնագրի ստորագրումը պարտադիր չէ, և Համաձայնագիրն ունի նույն իրավաբանական ուժը և սահմանում է նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչպես

հասարակ գրավոր ձևով կնքված Համաձայնագիրը: Այն դեպքում, երբ Հաճախորդները նախընտրում են ունենալ սույն Համաձայնագրի ստորագրված տարբերակը, ապա Հաճախորդը կարող է տպել երկու օրինակից, ստորագրել և ուղարկել Ընկերությանը՝ նշելով իր փոստային հասցեն: Համաձայնագրի պատշաճ ստորագրված և Ընկերության կողմից կնիքով վավերացված երկրորդ օրինակը կուղարկվի Հաճախորդի կողմից նշված փոստային հասցեին: Համաձայնագիրը կարող է կնքվել ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների կամ էլեկտրոնային թվային ստորագրություն դնելու միջոցով:

Համաձայնագրի մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված օրինակը համարվում է բնօրինակ և ունի նույն իրավաբանական ուժը՝ ինչ ձեռքով ստորագրված օրինակը: Հաճախորդի կողմից իրականացվել է Համաձայնագրի ստորագրումը տպված տարբերակով:

1.5. Հաճախորդը սույն Համաձայնագիրը կնքելու նպատակով պետք է Ընկերությանը փոխանցի Ընկերության կողմից պահանջված տեղեկությունները, իսկ դրանց փոփոխությունների դեպքում Ընկերությանը ծանուցի այդ փոփոխությունների մասին և ներկայացնի համապատասխան փաստաթղթերը՝ այդպիսի փոփոխություններից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով համապատասխան փոփոխված փաստաթղթերը:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1. Հաճախորդները Համաձայնագրին միանում են գրավոր կարգով դիմում ներկայացնելու միջոցով: Հաճախորդը, համապատասխանաբար լրացնելով, ստորագրելով և սույն Համաձայնագրում սահմանված կարգով ուղարկելով համապատասխան դիմումը Ընկերությանը, հաստատում է իր անվերապահ համաձայնությունը սույն Համաձայնագրի դրույթներին, դրանցում ամրագրված իրավունքներին և պարտավորություններին, հավաստում է, որ ծանոթացել է վերջինիս բովանդակությանը, ինչպես նաև Ընկերության վեբկայքի «Քաղաքականություն և Կարգավորում» բաժնում տեղադրված փաստաթղթերին և տեղեկատվությանը և անվերապահորեն ընդունում է նաև դրանց դրույթները և համաձայնում է սույն Համաձայնագրի շրջանակներում պայմանագրային իրավահարաբերությունների մեջ մտնել Ընկերության հետ: Համաձայնագիրը Ընկերության և Հաճախորդի միջև համարվում է ուժի մեջ մտած Ընկերության ներկայացուցչի պաշտոնական էլեկտրոնային հասցեից Հաճախորդի էլեկտրոնային հասցեին Համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ հավաստում ուղարկելու պահից:

2.2. Համաձայնագրին միանալու դիմումը հաստատում է (ստորագրում և Ընկերությանը ներկայացնում է) անձամբ Հաճախորդը կամ վերջինիս լիազորված անձը՝ Հաճախորդի կողմից տրամադրված լիազորագրի կամ օրենսդրությամբ իրեն վերապահված համապատասխան լիազորությունների հիման վրա: Համաձայնագրին միանալու դիմումը լիազորված անձի կողմից ներկայացվելու դեպքում Ընկերությունը իրավունք ունի այդ անձից պահանջել իրավասությունները հավաստող լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

2.3. Ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել լրացնել Ընկերության վեբկայքում տեղադրված «Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաթերթիկը, Հաճախորդի վերաբերյալ համակողմանի պատկերացում կազմելու, վերջինիս՝ օրենսդրությամբ սահմանված կարգով դասակարգելու և դիմումը հաստատելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու նպատակով:

2.4. Համաձայնագրի ցանկացած փոփոխություն հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս և ունի սույն Համաձայնագրին հավասար իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել 23-րդ Գլխով նախատեսված կարգով: Միևնույն ժամանակ՝ այն դեպքում, երբ մինչ սույն Համաձայնագրի կնքումը Հաճախորդն արդեն իսկ ստանձնել է որոշակի պարտավորություններ Ընկերության նկատմամբ՝ այլ գործարքների շրջանակներում, ապա տվյալ պարտավորությունները շարունակում են գործել: Սույն Համաձայնագիրը տարածվում է միայն վերջինիս (սույն Համաձայնագրի) ստորագրումից հետո Հաճախորդի և Ընկերության միջև ծագած իրավահարաբերությունների վրա:

2.5. Համաձայնագրով սահմանված են այն բոլոր ներդրումային ծառայությունները և դրանց հետ կապված լրացուցիչ ծառայությունները, որոնք Ընկերությունը մատուցում է Հաճախորդին:

2.6. Սույն Համաձայնագիրը վերաբերում է պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդներին: Հաճախորդին որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը իրականացվում է Ընկերության որոշմամբ՝ «Ճանաչիր քո Հաճախորդին» հարցաթերթիկում առկա և օրենսդրությամբ պարտադիր ստուգման ենթակա հարցերի վերաբերյալ ներկայացված պատասխանների հիման վրա: Ընկերության կողմից Հաճախորդի դասակարգումն իրականացվում է «Հաճախորդների դասակարգման» կարգով սահմանված ձևով և ժամկետներում:

2.7. Այն դեպքում, երբ Հաճախորդն Ընկերության կողմից դասակարգվել է որպես պրոֆեսիոնալ նա կարող է դիմել Ընկերությանը իրեն բոլոր ծառայությունների (նշվում է ներդրումային ծառայություններից որևէ մեկը/բոլոր ծառայությունները/որևէ գործարքը/արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքները) գծով որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու

համար (ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից), եթե Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը:

2.8. Ընկերությունը պարտավոր է անհապաղ դադարեցնել Հաճախորդի՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգումը (այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Հաճախորդին), եթե վերջինիս կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1. Սույն Համաձայնագրի շրջանակներում Ընկերության կողմից Հաճախորդին կարող են մատուցվել հետևյալ հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունները՝

- I. Հաճախորդից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- II. Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- III. Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում,
- IV. արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- V. արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- VI. արժեթղթերի պահառություն,
- VII. փոխառության տրամադրում Հաճախորդին՝ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ փոխատուն հանդիսանում է նման գործարքի կողմ,
- VIII. արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,
- IX. խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում,
- X. արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

3.2. Սույն Համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունները չեն ներառում ներդրումային խորհրդատվության տրամադրումը և ըստ այդմ, Ընկերության կողմից

Հաճախորդին տրամադրվող ցանկացած տեղեկություն չի համարվում ներդրումային խորհրդատվություն և Ընկերությունը չի երաշխավորում Հաճախորդի որևէ ներդրում: Հաճախորդն առանց սահմանափակման անձամբ է պատասխանատու իր ընդունած բոլոր որոշումների և կատարած բոլոր գործարքների համար:

#### 4. ՊԱՀԱՌՈՒՄԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Հաճախորդին պահառուական ծառայությունները Համաձայնագրի հիման վրա մատուցվում են՝

- I. Բրոքերային ծառայության հետ կապված,
- II. Այլ՝ զուտ պահառուական ծառայությունների մասով:

4.2. Սույն գլխի 1-ին կետով սահմանված բոլոր դեպքերում արժեթղթերի պահառության ծառայությունները ներառում են հետևյալը՝

- I. արժեթղթերի հաշիվներ բացելը և վարելը՝ այդ հաշիվներով գործառնությունների ժամկետներն ու էական պայմանները գրանցելով,
- II. արժեթղթերի նկատմամբ հաճախորդի գույքային իրավունքների գրանցումը,
- III. այլ պահառուների մոտ արժեթղթերի անվանատեր հանդես գալը՝ որպես պահառության ծառայությունների իրականացման միջոց և երաշխիք,
- IV. արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողից կամ այլ պահառուներից օրենքով, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուներին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը,
- V. Հաճախորդի Դեպո հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլումը,
- VI. Հաճախորդի արժեթղթերի հաշվին հաշվեգրված արժեթղթերի գրավի իրավունքի կամ այլ ծանրաբեռնվածության գրանցումը,
- VII. Հաճախորդի Դեպո հաշվից քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների (հաշվետվությունների) տրամադրումը,
- VIII. Արժեթղթերի նկատմամբ կամ դրանցից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայությունները, որոնց էական պայմանների վերաբերյալ անհրաժեշտության դեպքում կողմերի միջև կկնքվի առանձին համաձայնագիր:

4.3. Սույն համաձայնագրով սահմանված կարգով Հաճախորդի կողմից ձեռք բերված և փոխանցված ֆինանսական գործիքների (այսուհետ նաև Պահառության գործիքներ)

պահառությունն իրականացնում է Ընկերությունը, եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ բան չեն սահմանել: Արժեթղթերի պահառությունն իրականացնելու նպատակով Ընկերությունը Հաճախորդների համար բացում է հաշիվներ (այսուհետ նաև՝ Հաշիվ): Հաշիվը բացվում է սույն Համաձայնագրի կնքման ուժով, որը և հանդիսանում է Հաշիվը բացելու Հաճախորդի հանձնարարական:

4.4. Հաշիվն արժեթղթեր կարող են մուտքագրվել նաև Հաճախորդի այլ արժեթղթերի հաշիվներից:

4.5. Հաճախորդը սույնով լիազորում է Ընկերությանը Պահառության գործիքները գրանցել կամ կազմակերպել՝ կիրառելի օրենսդրությամբ թույլատրված ցանկացած անունով: Սովորաբար Պահառության գործիքները կլինեն անվանատիրոջ հաշվում:

4.6. Ընկերությունն իր անվանատիրոջ հաշվում հաշվառվող Պահառության գործիքների համար վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր Հաճախորդի համար:

4.7. Ընկերությունը վճարում է արժեթղթերից ստացված եկամուտը միայն դրանց փաստացի ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4.8. Եթե Հաճախորդի միջոցները պահվում են երրորդ անձի մոտ, Ընկերության պարտականությունն է այդ մասին տեղեկացնել Հաճախորդին՝ առանց բացահայտելու երրորդ անձ հանդիսացող պահառուի տվյալները: Հաճախորդն իրավունք ունի չհամաձայնվել, որ իր միջոցները պահվեն երրորդ անձի մոտ: Հաճախորդը որևէ պարտավորություն չի ստանձնում երրորդ անձանց նկատմամբ, որի մոտ պահվում են իր միջոցները:

4.9. Ընկերությունը Հաճախորդի հաշվով բոլոր գործառնությունների համար վարում է առանձին գրանցամատյաններ, որտեղ նշվում են արժեթղթերի հետ կապված գումարները/վաճառքները, մարումները, արգելադրումները և այլ տեսակի բոլոր տեղեկությունները:

4.10. Ընկերությունն իրավունք ունի միավորել Հաճախորդի բոլոր եկամուտները և անհրաժեշտության դեպքում փոխանցումն իրականացնել մեկ փոխանցմամբ, ինչպես նաև սառեցնել Հաճախորդի արժեթղթերը, եթե դրանց ապահովմամբ տրվել է Հանձնարարական:

4.11. Հաճախորդի արժեթղթերից ստացվող բոլոր եկամուտների շահառուն Հաճախորդն է, և Ընկերությունը պարտավոր է դրանք ստանալուց հետո վճարել Հաճախորդին:

4.12. Հաճախորդը կարող է ցանկացած պահի, տրամադրելով գրավոր ծանուցում, պահանջել փոխանցել ցանկացած գումար իր Հաշվից, պայմանով, որ իր Հաշվում պահպանում է բավարար

ակտիվներ Ընկերության հանդեպ նախկինում ստանձնած բոլոր պարտավորությունների և փոխհատուցումների կատարման համար:

4.13. Հաճախորդն իրավունք ունի գրավոր ծանուցմամբ Ընկերությունից պահանջել որևէ արժեթղթի կամ Պորտֆելի փոխանցում: Եթե Հաճախորդը ցանկանում է լուծել սույն Համաձայնագրը, նա պետք է ամբողջ պորտֆելը նախապես փոխանցի այլ անվանատիրոջ հաշվի, զրոյացնի դրամական միջոցները և մարի Ընկերության հանդեպ ստանձնած բոլոր տեսակի պարտավորությունները: Փոխանցումների հետ կապված բոլոր ծախսերը կրում է Հաճախորդը: Եթե Ընկերության կարծիքով այդ փոխանցումներն անիրագործելի են, Հաճախորդը պետք է ընտրի այլ անվանատիրոջ, որտեղ փոխանցումներն իրագործելի են:

4.14. Հաճախորդը համաձայնվում է, որ իր հաշվով 12 (տասներկու) ամիս շարժ չիրականացնելու դեպքում Ընկերությունն իրավասու է լուծել սույն Համաձայնագիրը 24-րդ գլխով սահմանված կարգով:

4.15. Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Պահառուական ծառայությունների մատուցման հետ կապված և Համաձայնագրով չկարգավորված առանձնահատկությունները կարգավորվում են Ընկերության Պահառության գործունեությունը կարգավորող կանոններով:

4.16. Պետական Գանձապետական պարտատոմսերով պահառուական գործառնությունները Ընկերության կողմից կատարվում են պետական պարտատոմսերի պահառությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերին և Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան:

4.17. Հաճախորդը գիտակցում է, որ Հաշիվը դրանում հաշվառվող արժեթղթերի առաջնային պահպանման վայր չի հանդիսանում, և Ընկերությունը չի վարում դրա սեփականատերերի ռեեստրը: Ընկերությունը հանդես է գալիս Հաշվում հաշվառվող արժեթղթերի անվանատեր այդ արժեթղթերի այլ պահառուների առջև՝ նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անվանատիրոջ հաշիվներում Հաճախորդին պատկանող արժեթղթերը միացվում են Ընկերության կամ վերջինիս Պահառուների՝ մյուս հաճախորդների արժեթղթերին և չեն նույնականացվում որպես Հաճախորդինը: Հաճախորդի արժեթղթերի նույնականացումը իրականացվում է բացառապես Ընկերության մոտ բացված և սպասարկվող Արժեթղթերի հաշիվներում: Արտասահմանյան արժեթղթերի պարագայում Ընկերության անվանատիրոջ հաշիվները սպասարկող պահառուները նույնպես կարող են հանդես գալ որպես նույն արժեթղթերի անվանատեր այլ պահառուների առջև՝ վերջիններիս մոտ ունենալով արժեթղթերի անվանատիրոջ հաշիվներ: Այդպիսով, արտասահմանյան արժեթղթերի պարագայում արժեթղթերի պահառությունը իրականացվում է գրքավ բազմամակարդակ անվանատիրական



համակարգի միջոցով, որի յուրաքանչյուր մակարդակում որպես պահառու հանդես եկող անձի մոտ բացված հաշիվներում արժեթղթերը նույնականացվում են բացառապես այդ պահառուի անմիջական հաճախորդ հանդիսացող անձի (պահառուի, իսկ Ընկերության դեպքում՝ Հաճախորդի) անունով:

4.18. Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է Հաշվով որոշակի գործառնությունների կատարման անհնարինությունը՝ հաշվի առնելով արժեթղթերի պահառության գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի առանձնահատկությունները: Մասնավորապես արտասահմանյան արժեթղթերով գրավի իրավունքի գրանցման կամ արգելադրման հանձնարարականները կարող են չկատարվել այդ արժեթղթերով առուվաճառքի հանձնարարականների ընդունման, փոխանցման և/կամ կատարման համակարգի առանձնահատկությունների բերումով և դրա համար ինստիտուցիոնալ, կազմակերպչական, տեխնիկական և իրավական հնարավորությունների բացակայության պատճառով:

4.19. Սույն Համաձայնագրով չսահմանված և սույն Գլխով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Ընկերության պահառության գործունեությունը կարգավորող կանոններով:

## 5. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների (այսուհետ՝ «Ածանցյալներ») շուկայում բրոքերային ծառայությունների (այսուհետ նաև՝ «Բրոքերային ծառայություններ») մատուցումն է, մասնավորապես՝

- I. ընդունել Հաճախորդի պատվերները վերջինիս հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու վերաբերյալ (այսուհետ՝ «Պատվերներ») և դրանք հաղորդել կատարման այլ անձանց,
- II. Հաճախորդի Պատվերների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից կատարել արժեթղթերով գործարքներ, այդ թվում՝ առաջնային տեղաբաշխմանը մասնակցելու (բաժանորդագրվելու) գործարքներ և Ածանցյալներով իրավունքների իրականացմանն ուղղված գործարքներ,
- III. Հաճախորդի պատվերների հիման վրա արժեթղթերով գործարքներ կնքել նրա հաշվին և նրա անունից: Ընդ որում, Ընկերությունը գործարքները կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ նրա կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է Առևտրային համակարգի (այսուհետ՝ «ԱՀ») կանոններով, ինչպես նաև ոչ բավարար ծածկույթով (մարժինալ) գործարքներ կնքելիս,
- IV. Հաճախորդի անունով բրոքերային հաշիվների բացում, սպասարկում և փակում,



V. վերոշարադրյալ ենթակետերում նշված Բրոքերային Օտոայությունների հետ կապված վերջնահաշվարկի (settlement) համար անհրաժեշտ գործողությունների իրականացում (բացառությամբ ՀՀ-ում շրջանառվող արժեթղթերի)՝ ՀՀ օրենքով և համապատասխան կանոնակարգով նշված պայմաններով և կարգով Հաճախորդի Բրոքերային հաշվից փոխանցելով և այդ հաշվին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները:

5.2. Ընկերությունը Հաճախորդի Պատվերները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարումն միայն այն դեպքերում, երբ Հաճախորդի Բրոքերային հաշվում առկա են այդ Պատվերներում նշված գործարքի վերջնահաշվարկի կատարման և Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ և արժեթղթեր, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարումն է հաղորդվում/փոխանցվում լեվերիջով գործարքի կնքման Պատվեր:

5.3. Հաճախորդը պարտավորվում է վաճառքի Պատվեր ներկայացնելու դեպքում 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությանը տրամադրել վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ (կամ այլ կերպ հաստատել վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը), բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը Ընկերության գործող «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» կանոնների համաձայն հանդիսանում է հաշվետեր:

5.4. Արժեթղթերի գնման և վաճառքի, ինչպես նաև դրանց հետ կորպորատիվ գործողության հետ կապված ռիսկերի գնահատումը բացառապես Հաճախորդի պարտականությունն է:

5.5. Ընկերությունն Արժեթղթերի հետ կապված որևէ երաշխիք չի տալիս:

5.6. Արժեթղթերի հետ կորպորատիվ գործողությունների մասին ծանուցումներն Ընկերությունը կարող է ստանալ չվերահսկվող աղբյուրներից: Չնայած Ընկերությունը կարող է համարել նման աղբյուրները վստահելի, սակայն պարտավոր չէ ստուգել այդ տեղեկությունների և ծանուցումների իսկությունը, հետևաբար չի երաշխավորում դրանց ճշգրտությունը, ամբողջականությունը կամ ժամանակին տրամադրելը ու Հաճախորդի առաջ պատասխանատվություն չի կրում նման տեղեկությունների ու ծանուցումների հիման վրա կատարված գործողություններից:

5.7. Հաճախորդը ինքնուրույն պետք է հետևի արժեթղթերի հետ կորպորատիվ գործողություններին, ներառյալ՝

I. թողարկման պայմաններին

- II. պարզևավճարներին,
- III. արժեթղթերի տրոհումներին, միավորումներին,
- IV. բաժնետերերին կապիտալի վերադարձներին,
- V. շահաբաժինների և արժեկտրոնների վճարման օրերին,

5.8. Հաճախորդի Պատվերների հիման վրա կնքված գործարքների գծով արժեթղթերի ընդունումն ու առաքումը Ընկերության կողմից իրականացվում է ՀՀ օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կանոններով, ԿԲ Կանոնակարգերով, սույն Համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

5.9. Հաճախորդի՝ Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և դրանց արդյունքում ստացված արժեթղթերը Ընկերությունը Կանոնակարգով և սույն Համաձայնագրով նախատեսված կարգով հաշվառում է արժեթղթերի հաշիվների վրա:

## 6. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՄԻՋՆՈՂԴԱՎՃԱՐՆԵՐ

6.1. Միանալով սույն Համաձայնագրին՝ Հաճախորդը հաստատում է, որ կարդացել, հասկացել և ընդունում է Ընկերության կայքի «ՍԱԿԱԳՆԵՐ» բաժնում տեղադրված սակագները (այսուհետ նաև՝ Սակագներ): Ընկերությունն իրավունք ունի փոխել իր սակագները՝ փոփոխված սակագները տեղադրելով իր կայքում: Հաճախորդի պարտավորությունն է այցելել Ընկերության կայք և ծանոթանալ փոփոխված սակագներին:

6.2. Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդների համար կիրառել հստակ սակագներ, եթե վեբկայքում տեղադրված սակագները ներկայացված են միջակայքային եղանակով: Ընկերության կողմից հստակ սակագները կցվում են սույն Համաձայնագրին միանալու վերաբերյալ հաստատվող նամակին և կարգավորվում են սույն Համաձայնագրով սահմանված նորմերով:

6.3. Ընկերությունն իրավունք ունի ստանալ միջնորդավճարներ Հաճախորդին մատուցված Ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն Համաձայնագրի, ինչպես նաև ծախսերի և վնասների փոխհատուցումներ, որոնք առաջացել են Հաճախորդի գործառնություններից: Հաճախորդը գիտակցում է, որ Ընկերության կայքում ներկայացված որոշ սակագներ ամրագրված են միջակայքային եղանակով և յուրաքանչյուր առանձին գործարքի դեպքում Ընկերությունը հաստատված Հանձնարականում կամրագրի տվյալ գործարքի նկատմամբ կիրառելի հստակ սակագինը:

6.4. Հաճախորդը սույնով տալիս է իր անվերապահ համաձայնությունը և հանձնարարում է, որպեսզի Ընկերությունը իր հաշվից անակցեպտ գանձի մատուցված Ծառայությունների համար վճարվելիք միջնորդավճարները՝ առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու կամ վերջինիս հետ համաձայնեցնելու:

6.5. Հաճախորդը պարտավորվում է միջև գործարքի իրականացումը ապահովել վերջինիս համար նախատեսված միջնորդավճարների առկայությունը Ընկերությունում բացված հաշվեհամարին:

6.6. Հաճախորդը գիտակցում է, որ գանձվող միջնորդավճարները կարող են ներառել նաև Ընկերության կողմից կրած յուրաքանչյուր ծախս և/կամ վնաս, որն առաջացել է Հաճախորդին Ծառայություններ մատուցելու ընթացքում կատարված գործառնությունների արդյունքում:

6.7. Ընկերությունը կարող է միջնորդավճարները գանձել Հաճախորդի համար Ընկերությունում բացված ցանկացած հաշվից: Ընկերությունն իրավունք ունի փակել Բաց դիրքերը, եթե Ընկերության նկատմամբ Հաճախորդի որևէ պարտավորության մարման համար այլ միջոցներ հասանելի չեն:

6.8. Հաճախորդի հաշվին միջնորդավճարների գանձման համար համապատասխան միջոցների բացակայության դեպքում վերջինս պարտավորվում է գործարքի իրականացումից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վճարել ներկայացված միջնորդավճարները Ընկերության բանկային հաշվեհամարին կամ իր հաշվին ապահովել դրանց առկայությունը:

6.9. Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի հաշվից գանձել նաև կետանցման տույժեր, եթե վերջինիս կողմից պարտավորությունները չկատարվեն ժամանակին: Գանձումը կկատարվի այնպիսի դրույքաչափով, որը ողջմտորեն համադրելի կլինի նման ժամկետանց ֆինանսավորման արժեքին: Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի չկատարված պարտավորությունները մարելու համար վաճառել Ֆինանսական գործիքներ Հաճախորդի առևտրային հաշվից՝ առանց Հաճախորդին զգուշացնելու, եթե չկա այլ պայմանավորվածություն Ընկերության և Հաճախորդի միջև:

6.10. Ընկերության կողմից Սակագները կարող են փոփոխվել միակողմանիորեն, այդ մասին նախապես 10 (տասը) աշխատանքային օր առաջ ծանուցելով Հաճախորդին և Ընկերության վեբկայքի Սակագներ բաժնում տեղադրելով նոր տարբերակը: Սակագներում կատարվող փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի լուծել սույն Համաձայնագիրը 23-րդ գլխով սահմանված կարգով:

## 7. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

7.1. Սույն Համաձայնագրում նախատեսված ծառայություններն Ընկերության կողմից մատուցվում են Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրով սահմանված կարգով հանձնարարականներ ներկայացնելու և դրանք Ընկերության կողմից հաստատվելու դեպքում: Սույն Համաձայնագրի շրջանակներում Հաճախորդի կողմից ցանկացած եղանակով և ցանկացած տեսակի ծառայությունների մատուցման համար ներկայացված պատվերները վերաբերելի դրույթներում միասին և/կամ առանձին կանվանվեն «Հանձնարարականներ»:

7.2. Հաճախորդի կողմից Ընկերությանը սույն Համաձայնագրում նշված ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձնարարականները կարող են ներկայացվել երկու հիմնական եղանակներով՝

- I. Ընկերության՝ սույն **Համաձայնագրում նշված էլեկտրոնային** փոստի հասցեին հանձնարարական ուղարկելու միջոցով,
- II. Ընկերության՝ սույն **Համաձայնագրում նշված հեռախոսահամարին** զանգ կատարելու միջոցով:

7.3. Ընկերությունը հաստատում է Հաճախորդի հանձնարարականները իրավասու անձի կողմից ստորագրված (հաստատված) և Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Հաստատված Հանձնարարականում Ընկերությունը նաև նշում է տվյալ Հանձնարարականի նկատմամբ կիրառելի միջնորդավճարը: Հաճախորդը նաև գիտակցում է, որ Ընկերությունը կարող է իր Հանձնարարականը ընդունել մասամբ, ինչի վերաբերյալ նշում կկատարվի Ընկերության կողմից հաստատված Հանձնարարականում:

7.4. Հաճախորդը իրավունք ունի փոփոխել կամ չեղարկել Ընկերությանը ուղարկված և/կամ Ընկերության կողմից հաստատված Հանձնարարականները՝ Ընկերության՝ սույն Համաձայնագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին չեղարկման կամ փոփոխման հայտ ներկայացնելու միջոցով մինչև դրանց իրականացումը սկսելը: Բացառիկ դեպքերում Ընկերությունը կարող է ընդունել Հանձնարարականի է չեղարկման կամ փոփոխման հայտը դրա իրականացումը սկսելուց հետո: Հանձնարարականի փոփոխման և/կամ չեղարկման հայտը համարվում է ընդունված այդ մասին Ընկերության կողմից Հաճախորդին էլեկտրոնային նամակով ծանուցելու պահից, ծանուցում չուղարկելու դեպքում փոփոխման և/կամ չեղարկման հայտը համարվում է մերժված: Հաճախորդը պարտավոր է Ընկերությանը հատուցել այն ծախսերը և վնասները, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից Հանձնարարականը չեղարկելու կամ փոփոխելու արդյունքում:

7.5. Համաձայնագրով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսված հիմնական Հանձնարարականների ձևերը սահմանված են Ընկերության կայքում: Եթե

Ընկերության կայքում առկա է տվյալ ծառայության հանձնարարականի սահմանված ձև Հաճախորդը պարտավորվում է Հանձնարարականը լրացնել և Ընկերությանը տրամադրել սահմանված ձևով: Սահմանված ձևով Հանձնարարականը չլրացվելու և ոչ պատշաճ լրացվելու դեպքում Ընկերությունն իրավունքի ունի պահանջել Հաճախորդից ուղղել Հանձնարարականը կամ հրաժարվել վերջինս հաստատելուց:

7.6. Եթե Ընկերության կայքում առկա չէ հանձնարարականի սահմանված ձև, ապա Հաճախորդը Հանձնարարականը ուղարկում է Համաձայնագրին միանալու դիմումում ամրագրված էլեկտրոնային հասցեից Ընկերությանը ծառայության մատուցման հայտ ուղարկելու կամ Ընկերությանը զանգ կատարելու միջոցով՝ նշելով հայցվող ծառայության էական պայմանները:

7.7. Հաճախորդը գիտակցում է, որ իր կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունները կարող են ժամանակին չհասնել Ընկերությանը: Հաճախորդը խնդիրների դեպքում կարող է կապ հաստատել Ընկերության աշխատակցի հետ և պարզել իր Հանձնարականի ընթացքը: Հաճախորդը գիտակցում է, որ Ընկերությունը չի կարող ընդունել Հանձնարարականներ կապի այլ եղանակներով, եթե նման բան նախատեսված չէ Ընկերության ներքին իրավական ակտերով կամ սույն Համաձայնագրով:

7.8. Ժամանակ առ ժամանակ Ընկերությունը կամ նրա գործընկերները կարող են իրականացնել Ընկերության էլեկտրոնային համակարգի տեխնիկական թարմացումներ, աշխատանքներ և այլն, ու դրանց ընթացքում հնարավոր է, որ Ընկերության էլեկտրոնային համակարգը ժամանակավորապես անհասանելի լինի: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Ընկերության էլեկտրոնային համակարգի խափանումների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

7.9. Հաճախորդը հասկանում և տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը կարող է կատարել իր Հանձնարարականները կարգավորվող շուկայից դուրս:

7.10. Ընկերությունը կարող է կատարել Ընկերության՝ սույն Համաձայնագրով սահմանված կարգով հաստատված ցանկացած Հանձնարարական, առանց հաշվի առնելու Հաճախորդի սխալները: Հաճախորդը գիտակցում է, որ Հանձնարարականներում մուտքագրված սխալների՝ այդ թվում տեխնիկական և մեխանիկական սխալների համար պատասխանատվություն է կրելու միայն ինքը:

7.11. Ընկերությունը սույն Համաձայնագրի 4.2 կետի IV-րդ ենթակետում նշված ծառայության մատուցումը կազմակերպում է 4.18 կետում նշված համակարգի միջոցով: Թողարկողից Հաճախորդին ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Հաճախորդին փոխանցվում են դրանք ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Հաճախորդից թողարկողին

ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Պահառուի կողմից փոխանցվում են համապատասխան կազմակերպչական, տեխնիկական, ինստիտուցիոնալ և իրավական հնարավորությունների առկայության դեպքում՝ 4.18. կետում նշված համակարգի միջոցով:

7.12. Ընկերությունը կարող է հրաժարվել տրամադրել ծառայությունների որոշ տեսակներ, այդ թվում հրաժարվել Հաճախորդի Հանձնարարականները կատարելուց, եթե՝

- I. Հաճախորդն իր հաշվին չունի բավարար միջոցներ Հանձնարարականի կատարման համար,
- II. Հանձնարարականի կատարումը կարող է վնասել Ընկերության հեղինակությունը կամ էլեկտրոնային համակարգը,
- III. Ընկերության կարծիքով նման Հանձնարարականով գործարքը կարող է դիտվել որպես տվյալ Ֆինանսական գործիքով շուկայի չարաշահում,
- IV. Ընկերության կարծիքով նման Հանձնարարականը տրվել է ծառայողական տեղեկատվությանը տիրապետելու պայմաններում,
- V. Ընկերության կարծիքով Հանձնարարականը հակասում է սույն Համաձայնագրի դրույթներին և/կամ Ընկերության ներքին իրավական ակտերին,
- VI. Հանձնարարականը ներկայացվել է ոչ իրավասու անձի կողմից,
- VII. Հանձնարարականը ներկայացվել է սահմանված ձևի խախտմամբ:

7.13. Ընկերությունն իրավունք ունի շտկել Պատվերում առկա տեխնիկական բնույթի սխալները:

7.14. Ընկերությունն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականը և/կամ փոխել Հանձնարարականի գինը նաև տեխնիկական և այլ տեսակի սխալի դեպքում:

7.15. Հաճախորդն ընդունում և գիտակցում է, որ իր Հանձնարարականները կարող են մերժվել Ընկերության կողմից, և դրա հետևանքով Հաճախորդը չի կարող որևէ գույքային կամ նյութական պահանջ ներկայացնել Ընկերությանը:

7.16. Ընկերությունը ձեռնարկում է հասանելի բոլոր քայլերը հնարավոր լավագույն արդյունքի համար, երբ կատարում է Հաճախորդի Հանձնարարականը:

7.17. Սույնով կողմերը համաձայնվում են, որ բրոքերային ծառայությունների մատուցման հանձնարարականը հանդիսանում է հաշվով համապատասխան պահառուական գործառնությունը կատարելու հանձնարարական, և արժեթղթերի մուտքագրման և փոխանցման համար անհրաժեշտ առանձին հանձնարարական Հաճախորդի կողմից չի ներկայացվում:

7.18. Հաճախորդի Հանձնարարականների կատարումը իրականացվում է պահպանելով Ընկերության «Պատվերների կատարման» քաղաքականության պահանջները:

## 8. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

8.1. Եթե սույն Համաձայնագրում սահմանված կարգով Հաճախորդը Ընկերությանը ներկայացրել է արժեթղթերով գործարքների կնքման Հանձնարարական, Ընկերությունը պարտավորվում է Հանձնարարականի արդյունքում կնքված գործարքի իրականացումից հետո անմիջապես, բայց ոչ ուշ քան գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը, Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկել Պատվերի կատարման մասին հաշվետվություն (այսուհետ՝ «Հաշվետվություն»):

8.2. Հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- I. Ընկերության անվանումը,
- II. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,
- III. գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- IV. գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,
- V. Հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- VI. գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
- VII. արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- VIII. պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- IX. պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- X. արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
- XI. միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում), ընդհանուր ծավալը,
- XII. գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),
- XIII. հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
- XIV. տեղեկատվություն այն փաստի մասին, որ Հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել սովյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:



8.3. Եթե Հաճախորդի Հանձնարարականը կատարվի մասնաբաժիններով, ապա Հաշվետվությունը կտրամադրվի առանձին յուրաքանչյուր մասնաբաժնի համար:

8.4. Ընկերությունն ամիսը մեկ անգամ Հաճախորդին տրամադրում է քաղվածք Հաշվում առկա արժեթղթերի և դրանց կարգավիճակի վերաբերյալ:

8.5. Ընկերությունը Սակագներով սահմանված վճարի դիմաց տրամադրում է Հաշվից քաղվածքներ ըստ Հաճախորդի գրավոր պահանջի: Քաղվածքները տրամադրվում են 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի էլեկտրոնային փոստի միջոցով: Բնօրինակ քաղվածքը Հաճախորդի կողմից պահանջվելու դեպքում վերջինս այն կարող է ստանալ Ընկերության գտնվելու վայրից:

## 9. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐ

9.1. Սույն գլխի իմաստով հաճախորդի միջոցներ են համարվում Համաձայնագրի հիման վրա Ընկերության տիրապետմանը և(կամ) կառավարմանը հանձնված հաճախորդին պատկանող արժեթղթերը և դրամական միջոցները՝ առանց՝ դրանց կառավարման արդյունքում առաջացած շահույթի:

9.2. Ընկերությունն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի այն դրամական միջոցները, որոնք Հաճախորդի կողմից փոխանցվել են իր՝ Ընկերությունում բացված բրոքերային հաշվին և որոնց օգտագործման վերաբերյալ Հաճախորդը տրամադրել է իր գրավոր համաձայնությունը: Համաձայնությունը տրամադրվում է սույն Համաձայնագրին միանալու դիմումով:

9.3. Հաճախորդի միջոցներն օգտագործելու դիմաց Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդին վճարել փոխհատուցում՝ իր կողմից սահմանված չափով և կարգով:

9.4. Հաճախորդի կողմից իր դրամական միջոցների օգտագործման համաձայնությունը ստանալու դեպքում Ընկերությունը կարող է դրանք օգտագործել ամբողջությամբ կամ մաս-մաս, իսկ Հաճախորդի պահանջի դեպքում վերջինիս հետ երկկողմանի համաձայնեցված կարգով և ժամկետներում վերադարձնել դրամական միջոցները:

9.5. Ընկերությունն իրականացնում է Հաճախորդի միջոցների պահպանությունը համաձայն «Հաճախորդների միջոցների պահպանման և պաշտպանության սկզբունքներ»-ի:

## 10. ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. Բացառիկ դեպքերում Ընկերությունն իրավունք ունի, հանդես գալով որպես հարկային գործակալ, Հաճախորդի հաշվից գանձել վերջինիս մասնակցությամբ գործարքներից առաջացած Հաճախորդի հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները և դրանք ուղղել նրա հարկային պարտավորությունների կատարմանը:

10.2. Մինևույն ժամանակ, Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հարկային պարտավորությունների կատարման համար: Հաճախորդը հավաստում է, որ պարտավորվում է կատարել իր հարկային պարտավորությունները և չի առաջնորդվելու Համաձայնագրի 10.1 կետով:

10.3. Ընկերությունը կարող է նաև աջակցություն ցուցաբերել հարկային պարտավորությունների իրականացման համար, որը սակայն չի համարվում հարկային խորհրդատվություն և Ընկերության համար որևէ պատասխանատվություն չի կարող առաջացնել:

10.4. Որոշակի դեպքերում Ընկերությունը կարող է, որպես պարտադիր կանոն, Հաճախորդից պահանջել լրացնել հավելյալ փաստաթղթեր հարկային պարտավորությունների վերաբերյալ, ներառյալ բայց չսահմանափակվելով, Ամերիկյան աղբյուրից ստացվող եկամուտներին վերաբերող համապատասխան փաստաթղթեր: Հաճախորդը գիտակցում և ընդունում է նաև, որ նման փաստաթղթերի ոչ պատշաճ տրամադրման կամ չտրամադրման դեպքում Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունների մատուցումից՝ առանց որևէ լրացուցիչ հիմնավորման:

## 11. ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

11.1. Հաճախորդն անձամբ պատասխանատու է իր ներդրումային որոշումների համար և ընդունում է դրանց հետ կապված բոլոր ռիսկերը: Ընկերությունը չի երաշխավորում ներդրումները որևէ Ֆինանսական գործիքում և Հաճախորդի հետ համապարտ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած որևէ վնասի համար: Ընկերությունը կարող է տեղեկացնել Հաճախորդին, եթե գա այն եզրահանգման, որ որևէ Ֆինանսական գործիք կամ ներդրումային ծառայություն չի համապատասխանում Հաճախորդի շահերին:

11.2. Ընկերությունը պատասխանատվություն է կրում Հաճախորդի իրական վնասների համար, որոնք առաջացել են Ընկերության մեղքով և սույն Համաձայնագրում սահմանված պարտականությունները չկատարելու արդյունքում:

11.3. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի որևէ կորստի, պարտավորության, ծախսի կամ վնասի համար, որը Հաճախորդի համար առաջացել է կամ կարող է առաջանալ որևէ երրորդ անձի՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, ցանկացած բրոքերի, բանկի, գործակալի, պահառուի, ներդրումային բորսայի, դեպոզիտարիայի կամ քլիրինգային տան, էլեկտրոնային վճարումների մատակարարի անփութության, դիտավորյալ չկատարման, սնանկացման կամ խարդախության հետևանքով:

11.4. Հաճախորդը հավաստիցնում է, որ երրորդ անձանց կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում հնարավոր խարդախությունների մասին անմիջապես կտեղեկացնի Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է կիրառել իր գործիքակազմը նման խարդախություններից Հաճախորդին գերծ պահելու համար:

11.5. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ անվանատիրոջ հաշիվները վարող և սպասարկող, ինչպես նաև Ընկերության հաճախորդների և այդ թվում՝ Հաճախորդի միջոցների անվանատեր պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին: Այդուհանդերձ Ընկերությունը պարտավորվում է պատշաճ շրջահայացություն ցուցաբերել իր անմիջական գործընկեր հանդիսացող պահառուներ ընտրելիս՝ այնպես, որ հնարավորինս ապահովվի հաճախորդների շահերի պաշտպանությունը, եթե Ընկերությունը հնարավորություն ունի ընտրելու այդպիսի գործընկեր պահառուների:

11.6. Հաճախորդը սույն Համաձայնագրով սահմանված Ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա դրամական պարտավորությունների կատարման ժամկետների խախտման համար պատասխանատվություն է կրում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Սակագներում նշված չափով: Սակագներում նշված տույժերն Ընկերությունն իրավունք ունի կիրառելու խախտման ամբողջ կամ որոշակի ժամանակահատվածի համար՝ միանձնյա որոշմամբ:

11.7. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց և/կամ այլ պետությունների կողմից կիրառված սանկցիաների հետևանքով սույն Համաձայնագրով մատուցվող Ծառայությունների իրականացման հնարավորությունների սահմանափակման հետևանքով Հաճախորդի կրած ցանկացած վնասի համար՝ անկախ հետևանքների առաջացման ժամանակից: Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ չի ունենալու որևէ պահանջ նման սանկցիաների հետևանքով գործարքի չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման վերաբերյալ:

## 12. ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

12.1. Սույն Համաձայնագիրը բացի Ծառայություններից, Հաճախորդին տեղեկացնում է ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված հիմնական ռիսկերի մասին:

12.2. Ֆյուչերսները, օպցիոնները և այլ ածանցյալ գործիքները բարձր լեվերիջային գործիքներ են և ունեն բարձր ռիսկի աստիճան: Հնարավոր է, որ դրանցով գործարքների կատարման արդյունքում Հաճախորդը կրի մեծ վնասներ կամ կորցնի իր ամբողջ կապիտալը: Այս գործիքները հարմար չեն բոլոր ներդրողների համար և Հաճախորդը պետք է համոզված լինի, որ ինքն ընդունում է բոլոր ռիսկերը և անհրաժեշտության դեպքում դիմի անկախ փորձագետի օգնությանը:

12.3. Ընկերությունը կարող է հարցման միջոցով տեղեկանալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին: Այս գնահատականի հիման վրա Ընկերությունը կարող է Հաճախորդին խորհուրդ տալ ինչ ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարել ըստ Հաճախորդի համար ընդունելի ռիսկի չափանիշների:

12.4. Հաճախորդին (բանավոր, թե գրավոր) տրամադրված ընդհանուր կարծիքները կապված տնտեսական հարցերի, իրադրության, շուկաների, ներդրումային ռազմավարությունների կամ ներդրումների, առևտրային առաջարկների, հետազոտությունների հետ կամ նման այլ տեղեկությունները չպետք է դիտվեն որպես խորհրդատվություն կամ Ընկերության առաջարկություններ: Ցանկացած տեղեկություն, որը կարող է Հաճախորդը ստանալ Ընկերությունից, բարեխղճորեն կտրամադրվի զուտ Հաճախորդի տեղեկատվության համար, այն չի համարվում Ընկերության կողմից Հաճախորդին ներդրումային խորհրդատվության տրամադրում: Ընկերությունը չի երաշխավորում, որ տրամադրված ցանկացած տեղեկատվություն ճշգրիտ է կամ ամբողջական, և Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում որևէ կորուստի, պարտավորության կամ ծախսի համար, որը Հաճախորդը կարող է կրել՝ հիմնվելով նման տեղեկատվության վրա, բացառությամբ եթե նման կուրուստներն առաջացել են Ընկերության մեղքով (Ընկերության կողմից տեղեկատվության տրամադրումը չի կարող վկայակոչվել կամ համարվել որպես Ընկերության մեղքով Հաճախորդին վնաս հասցնելը հիմնավորող հանգամանք):

12.5. Երբ Հաճախորդը որոշում է ընդունում գործարք կատարել ֆինանսական գործիքով, նա ընդունում և գիտակցում է այդ ֆինանսական գործիքի հետ կապված բոլոր ռիսկերը: Այդ ռիսկերից հիմնականներն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը, բիզնես, գործառնական և չկատարման ռիսկը, որը

կարող է առաջանալ արտաբորսայական շուկայում: Հաճախորդը նաև հավաստում է որ ծանոթացել է սույն Համաձայնագրի Հավելված 5-ում ամրագրված Ռիսկերի մասին ծանուցմանը:

12.6. Հաճախորդը նաև ընդունում և գիտակցում է, որ անկախ տեղեկատվությունից, որը կարող է տրամադրվել Ընկերության կողմից, ցանկացած Ֆինանսական գործիքի գին, որում Հաճախորդը իրականացրել է ներդրում, կարող է աճել, նվազել կամ հավասարվել գրոյի:

12.7. Հաճախորդը հայտարարում է, որ ընդունում է հետևյալը՝

- I. որոշ ֆինանսական գործիքներ հնարավոր է անմիջապես չդառնան իրացվելի պահանջարկի և առաջարկի բացակայության պատճառով և հնարավոր է՝ Հաճախորդը չկարողանա դրանք վաճառել կամ կարողանա վաճառել նախատեսվածից ավելի ցածր գնով,
- II. իր բնակության երկրից բացի այլ արժույթով գործարքներ կնքելիս արտարժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում կարող է կրել լրացուցիչ վնասներ,
- III. օտարերկրյա շուկաներում գնանշվող ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկերը կարող են տարբերվել իր երկրում առկա ռիսկերից, որոշ դեպքերում ռիսկերը կարող են ունենալ ավելի բարձր մակարդակ,
- IV. ածանցյալ գործիքի արժեքն ուղղակիորեն կախված է նրա հիմքում ընկած գործիքի գնից կամ որևէ այլ ակտիվից, որը կարող է տատանվել:

### **13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

13.1. Հաճախորդը կարող է Ընկերության հետ հաղորդակցվել գրանցված փոստի, էլեկտրոնային փոստի կամ Ընկերության կողմից տրամադրված այլ հարթակի միջոցով: Հաճախորդը պետք է Համաձայնագրի՝ «Ընկերության հետ կապ հաստատելու միջոցները և հասցեները» բաժնում հիշատակված հասցեները դիտարկի որպես Ընկերության հետ կապ հաստատելու (տեղեկատվություն, նամակներ, փաստաթղթեր փոխանակելու) հիմնական հասցեներ: Ընկերության կողմից Հաճախորդին կարող է տրամադրվել նաև հաղորդակցության այլ հասցեներ՝ ինչպես ընդհանուր այնպես էլ՝ կոնկրետ տեսակի հաղորդակցության իրականացման համար: Ընկերության կողմից Հաճախորդին հաղորդակցության այլ հասցեներ տրամադրելու դեպքում Հաճախորդը պարտավոր է հետագա հաղորդակցությունը իրականացնել նոր հասցեների միջոցով: Հաղորդակցության նոր հասցեների տրամադրումն իրականացվում է Հաճախորդի կողմից նշված էլեկտրոնային փոստին համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

13.2. Ընկերությունը Հաճախորդին տեղեկությունները, վերջինիս վերաբերյալ հաշվետվությունները, քաղվածքները և որևէ այլ տեղեկատվություն կարող է փոխանցել թղթային

կամ էլեկտրոնային ձևաչափով՝ Հաճախորդի կողմից Համաձայնագրին միանալու դիմումում նշված էլեկտրոնային և/կամ փոստային հասցեին դրանք ուղարկելու միջոցով: Ընկերությունը կարող է Հաճախորդներին տեղեկություններ տրամադրել նաև իր պաշտոնական վեբկայքի միջոցով:

13.3. Տեղեկատվության փոխանակման հիմնական լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը: Ընկերության վեբկայքում տեղեկատվություն հրապարակելիս Ընկերությունը լեզվի ընտրության հարցում ունի բացարձակ հայեցողություն:

## 14. ՀԱՏՈՒՑՈՒՄ

14.1. Հաճախորդը պետք է հասուցի Ընկերության ցանկացած վնաս, որն առաջացել է սույն Համաձայնագրի շրջանակներում Հաճախորդին մատուցված ծառայությունների ժամանակ, ներառյալ, բայց չսահմանափակվելով

- I. Հաճախորդի կողմից կամ անունից տրված ցանկացած Հանձնարարականի հիման վրա գործելու արդյունքում, որն Ընկերությունը հաստատել է կամ
- II. առաջացել է Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրի որևէ դրույթի խախտման արդյունքում:

## 15. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

15.1. Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում է հաշվետվություն տրամադրող անձ: Համապատասխանաբար Ընկերությունը իրավունք ունի Հաճախորդից պահանջել ինչպես եկամտի աղբյուրի մասին, այնպես էլ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն հավաստիանալու համար, որ Հաճախորդը ներգրավված չէ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ:

15.2. Ընկերությունն իրավունք ունի չկատարել Հաճախորդի Հանձնարարականները, եթե Հաճախորդը չի ներկայացրել Ընկերության պահանջված տեղեկությունները և/կամ փաստաթղթերը:

15.3. Ընկերությունն իրավունք ունի անմիջապես լուծել սույն Համաձայնագիրը և արգելափակել Հաճախորդի հաշիվների միջոցները, եթե Ընկերության հիմնավոր կարծիքով Հաճախորդը ներգրավված է Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ:

## 16. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

16.1. Ընկերության ներքին կանոնակարգերի համաձայն՝ Ընկերությունը կիրառում է իր ողջ գործիքակազմը, որպեսզի կանխարգելի Ընկերության և Հաճախորդների, ինչպես նաև Հաճախորդների միջև շահերի բախման ղեպքերը: Եթե Ընկերությունն իր գործիքակազմով չի կարողանում կանխարգելել շահերի բախման ղեպքերը, այդ մասին տեղեկացնում է Հաճախորդին և հավաստիացնում, որ նրանց շահերը միշտ պաշտպանված են:

16.2. Հաճախորդը գիտակցում է, որ Ընկերության հետ գործարար հարաբերության ժամանակ հնարավոր են ղեպքեր, որ Ընկերությունը տեղեկացված չլինի շահերի բախման ղեպքերի մասին:

## 17. ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17.1. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի կատարում սույն Համաձայնագրով կամ Ընկերության հետ կնքված որևէ այլ փաստաթղթի հիման վրա սահմանված իր պատրավորությունները (ներառյալ՝ Ընկերությանը գումար փոխանցելու վերաբերյալ պարտավորությունները) Ընկերությունն իրավունք ունի առանց Հաճախորդի նախնական համաձայնության արգելանք կիրառել, պահել, վաճառել, և/կամ անակցեպտ գանձել Հաճախորդի հաշիվներում առկա ցանկացած և բոլոր դրամական միջոցները, ներդրումային սեփականության իրավունքի փաստաթղթերը, վկայագրերը և այլ ակտիվները, ներառյալ, բայց չսահմանափակվելով հաճախորդի արժեթղթերով («Ապահովության ակտիվներ»), լինի դա Հաճախորդի արժեթղթերի հաշվում պահվող Ապահովության ակտիվներ, թե Ընկերության անվանատիրոջ հաշվում առկա Ապահովության ակտիվներ և բավարարել ցանկացած չնարված պարտավորություն, որը Հաճախորդը կամ Հաճախորդի անունից՝ Ընկերությունը կարող է ունենալ տվյալ պահին որևէ երրորդ անձի նկատմամբ՝ սույն Համաձայնագրի և Ընկերության ներգրավվածությամբ որևէ այլ գործարքների շրջանակներում: Սույն կետում նկարագրված գործողությունների կատարումը չի սահմանափակում կիրառելի օրենսդրությամբ կամ Համաձայնագրով նախատեսված այլ պաշտպանության միջոցների կիրառումը:

17.2. Ընկերության նկատմամբ որևէ կետանցված պարտավորության առկայության դեպքում Հաճախորդն իրավունք չունի, առանց Ընկերության նախնական գրավոր համաձայնության, իրականացնել Ընկերությունում պահվող իր միջոցներից ելք կամ կատարել որևէ այլ գործողություն, որի արդյունքում Ապահովության ակտիվները կարող են որևէ կերպ ծանրաբեռնվել կամ փոխանցվել այլ անձի տիրապետությանը:



17.3. Ընկերությունը կարող է Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած ժամկետանց պարտավորություն հաշվանցել Ընկերության կողմից Հաճախորդի նկատմամբ ունեցած ցանկացած պարտավորության դիմաց, անկախ պարտավորության արժույթից և վճարման վայրից: Եթե պարտավորությունները տարբեր են արժույթներով, Ընկերությունը կարող է փոխարկել պարտավորությունները շուկայական փոխարժեքով հաշվանցման նպատակով: Հաճախորդը փոխհատուցում է Ընկերություն ցանկացած կորստի, վնասի, ծախսերի, պահանջների համար, եթե դրանք առաջացել են Հաճախորդի միջոցների փոխարկման արդյունքում սույն դրույթով սահմանված դեպքերում:

17.4. Ընկերության նկատմամբ ստանձնած բոլոր պարտավորությունները համարվում են մարված, եթե մարվել է պարտավորությամբ ամրագրված ամբողջ գումարը, ներառյալ մարման հետ կապված ծախսերը:

## **18. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

18.1. Ընկերության պարտավորությունն է պաշտպանել Հաճախորդի անձնական տվյալները համաձայն Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի:

18.2. Ընկերությունը մշակում է Հաճախորդի մասին տվյալները Հաճախորդի հաշվի բացման և Հաճախորդին սույն Համաձայնագրում նշված ծառայությունները մատուցելու նպատակով: Ընկերությունը օգտագործում է Հաճախորդի անձնական տվյալները միայն Հաճախորդին ծառայություններ մատուցելու ժամանակ անհրաժեշտության դեպքերում, բացառությամբ կիրառելի օրենսդրությամբ թույլատրված դեպքերի, երբ Հաճախորդի տվյալները կարող են օգտագործվել այլ նպատակներով:

18.3. Ընկերությունը կարող է բացահայտել Հաճախորդի ներկայացրած կամ իրեն հայտնի դարձած Հաճախորդի մասին տեղեկությունները սույն Համաձայնագրի շրջանակներում Ընկերության պարտավորությունների կատարման ժամանակ: Ընկերությունը կարող է նաև այդ տվյալները բացահայտել իր հետ փոխկապակցված անձանց: Ընկերությունը պարտավորվում է չբացահայտել այդ տեղեկությունները, եթե համոզված չէ, որ իր հետ փոխկապակցված անձինք չեն բացահայտի այդ տեղեկությունները երրորդ անձանց, բացառությամբ կիրառելի օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

18.4. Հաճախորդը համաձայնվում է, որ Ընկերությունը և նրա հետ փոխկապակցված անձինք կարող են՝

I. տիրապետել և մշակել Հաճախորդի մասին տեղեկությունները,

- II. օգտագործել այդ տեղեկությունները Հաճախորդի հաշիվները կառավարելու, ծառայություններ մատուցելու, Հաճախորդի հաշիվը հսկելու և գեղծարարության դեպքերը բացահայտելու համար,
- III. բացահայտել այդ տեղեկությունները փոխկապակցված անձանց, Ընկերությանը ծառայություն մատուցող մատակարարներին, գործակալներին,
- IV. վերլուծել և օգտագործել տեղեկությունները՝ ի շահ Հաճախորդի:

18.5. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ Ընկերության հետ ցանկացած խոսակցություն կարող է ձայնագրվել և պահպանվել և Ընկերությունը կարող է այդ ձայնագրությունները տրամադրել այլ անձանց Օրենքով սահմանված դեպքերում: Բոլոր Հանձնարարականները պահվում են Ընկերության Էլեկտրոնային համակարգում:

18.6. Բոլոր ձայնագրությունները Ընկերության սեփականությունն են և կարող են կիրառվել իրավական (դատական) գործընթացներում:

## 19. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 19.1. Հաճախորդը սույնով հավաստում և երաշավորում է որ՝
- I. իրավունք ունի միանալ սույն Համաձայնագրին, կնքել ցանկացած գործարք, որոնք կարող են կատարվել սույն Համաձայնագրի շրջանակներում,
  - II. իր երկրի օրենսդրության և իրավական ակտերի համաձայն չունի որևէ սահմանափակում սույն Համաձայնագրով սահմանված գործարար հարաբերության մեջ մտնելու համար: Նման սահմանափակում առաջանալու դեպքում անմիջապես տեղյակ կպահի Ընկերությանը:
  - III. Ընկերությանը ներկայացված ցանկացած տեղեկություն և փաստաթուղթ ճշգրիտ է, ամբողջական և վավեր,
  - IV. Ընկերությանը փոխանցված ցանկացած միջոց Հաճախորդի սեփականությունն է, ծանրաբեռնված չէ որևէ պարտավորությամբ, գրավի առարկա չէ, չի հանդիսանում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույք,
  - V. գործում է իր անունից և ոչ որպես որևէ մեկի ներկայացուցիչ կամ հոգաբարձու, եթե Հաճախորդն Ընկերությանը չի ներկայացրել լիազորագիր և իրավունք տվել որևէ երրորդ անձի գործել իր անունից,
  - VI. սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացված իր որևէ գործողություն չի հակասի սույն Համաձայնագրին և/կամ չի խախտի երրորդ անձանց իրավունքները

- VII. սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած իրավունք իրացնելիս և/կամ գործողություն իրականացնելիս տեղյակ է դրա հետ կապված ռիսկերի մասին և ընդունում է այդ ռիսկերը:
- VIII. ունի կանոնավոր մուտք դեպի համացանց, ժամանակ առ ժամանակ հետևելու է Ընկերության վեբկայքի նորություններին, սակագների, Համաձայնագրի փոփոխություններին, դրանց հետ չհամաձայնվելու դեպքում տեղեկացնելու է Ընկերությանը,
- IX. ինքը, իսկ իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում՝ ընկերությունը, վերջինիս ղեկավար անձնակազմից որևէ անձ, բաժնետերերը, մասնակիցները, իրական շահառուները կամ Հաճախորդի հետ անմիջականորեն փոխկապակցված այլ անձինք ընդգրկված չեն որևէ պետության կամ իրավասու մարմնի սանկցիոն ցուցակներում,
- X. իր նկատմամբ հարուցված չէ և/կամ չի ընթանում սնանկության վարույթ, կամ նմանատիպ որևէ գործընթաց,
- XI. Կարողացել է սույն Համաձայնագրի և կից հավելվածների բոլոր դրույթները, ծանոթացել է Ընկերության վեբկայքում տեղադրված տեղեկատվությանը:
- XII. գործարքների արդյունքում կրած կորուստների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ, եթե դրանք առաջացել են Ընկերության մեղքով:

19.2. Հաճախորդը նաև հավաստում է, որ գիտակցում է և սույնով տալիս է իր համաձայնությունը որ՝

- I. Ընկերությունը իր մասին (այդ թվում՝ իմ անձնական տվյալներին վերաբերվող) տեղեկություններ (անցյալ և ներկա) հավաքագրելու նպատակով կարող է հարցումներ կատարել այլ անձանց (իրավաբանական և ֆիզիկական), ճշտել իր կողմից ներկայացված տեղեկությունների արժանահավաստությունը, ինչպես նաև պարզել իր անձնական տվյալներին վերաբերող տեղեկատվություն,
- II. Ընկերությունը կարող է հարցումներ կատարել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և (կամ) ՀՀ ԿԲ Վարկային Ռեզիստից և (կամ) «ՆՈՐՔ» կենտրոնից և (կամ) «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից և (կամ) ՀՀ պետական մարմիններից՝ իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների, անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունների և ցանկացած այլ տվյալների մասին, որոնք անհրաժեշտ կլինեն Ընկերության կողմից իր՝ Համաձայնագիրը կնքելու վերաբերյալ դիմում-հայտը քննարկելու և բրոքերային/պահառության ծառայություններ մատուցելու, բրոքերային/դեպո հաշիվներ սպասարկելու պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելու համար, ինչի կապակցությամբ խնդրում է վերը նշված տեղեկատվությունը մշակող սուբյեկտներին Ընկերությանը տրամադրել հարցվող տեղեկատվությունը, ինչպես նաև Համաձայնագիր կնքելու դեպքում դրա ամբողջ գործողության ընթացքում, առանց իրեն նախապես տեղեկացնելու, Ընկերությանը տրամադրել իր վերաբերյալ տեղեկություններ և տվյալներ:

- III. Ընկերությունն իր վերաբերյալ կատարված հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկությունը Ընկերության կողմից հետագայում տրամադրվի նաև Ընկերության հետ համագործակցող կազմակերպություններին՝ Ընկերության և նշված կազմակերպությունների միջև համագործակցության նպատակների իրականացման համար: Գիտակցում է, որ ստացված տեղեկությունները և (կամ) տվյալները կարող են ազդել Ընկերության կողմից կայացվելիք որոշումների վրա:
- IV. որ Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում (այուհետ՝ «Կանոնակարգ») սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու, մասնավորապես՝ «Մետա-Իքս Մարկետս» ՓԲԸ-ն կարող է չպահպանել հաճախորդին տեղեկատվություն տրամադրելու որոշակի պահանջներ (Կանոնակարգի գլուխ 4) չտրամադրել տեղեկություններ ներդրումային ծառայությունների առարկա հանդիսացող արժեթղթերի մասին (Կանոնակարգի 5-րդ գլուխ), սահմանափակել տեղեկատվությունը իր և իր կողմից մատուցվող ծառայությունների մասին, ծախսերի և միջնորդավճարների կամ դրանց հաշվարկման կարգի մասին, համարել, որ պրոֆեսիոնալ հաճախորդը ունի անրաժեշտ գիտելիքներն ու փորձը և այլն,
- V. եթե Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, ապա պարտավոր է դիմել Ընկերությանը իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերելու համար՝ նշելով այն արժեթղթերը/գործարքները, որոնց գծով ցանկանում է, որ Ընկերությունն իրեն վերաբերվի որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ,
- VI. Ընկերությունը կարող է Հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և վերջինիս նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները նաև այլ դեպքերում՝ ինչպես Հաճախորդի նախաձեռնությամբ, այնպես էլ իր նախաձեռնությամբ և Հաճախորդի համաձայնությամբ,
- VII. պարտավոր է Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել իրեն որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգելու վրա,

## 20. ԲՈՂՈՔՆԵՐ

20.1. Հաճախորդ՝ սույն Համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների առնչությամբ որևէ բողոք ունենալու դեպքում, վերջինս կարող է այդ մասին Ընկերությանը հայտել

սույն Համաձայնագրում ամրագրված Ընկերության էլեկտրոնային հասցեին իր բողոքը ուղարկելու միջոցով:

20.2. Հաճախորդը իր բողոքը չպետք է ներկայացնի կոնֆլիկտային իրավիճակի էմոցիոնալ գնահատմամբ և/կամ վիրավորական բառապաշարով:

## 21. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

21.1. Համաձայնագրով նախատեսված պարտականությունների և (կամ) պարտավորությունների (այսուհետ՝ «Պարտավորություն») խախտման կամ չկատարման կամ անպատշաճ կատարման համար Հաճախորդը և Ընկերությունը ազատվում են պատասխանատվությունից այն դեպքում, երբ պարտավորությունների կատարումն անհնար է դարձել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (Ֆորս-մաժոր), այն պայմանով, որ վերջինս անմիջականորեն ազդել է պարտավորությունների կատարման վրա: Անհաղթահարելի ուժի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, ինչպես նաև արտակարգ ու անկանխելի այլ հանգամանքներ:

21.2. Ֆորս-մաժորային իրադարձության ի հայտ գալու դեպքում Հաճախորդը պետք է Ընկերությանը անմիջապես գրավոր, իսկ եթե դա անհաղթահարելի ուժի ազդեցության պայմաններում հնարավոր չէ, ապա՝ բանավոր տեղեկացնի անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների մասին, բացատրելով անհաղթահարելի ուժի առկայության և ազդեցության մանրամասները: Այդ տեղեկացումը պետք է կատարվի անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պահից ողջամիտ ժամկետում:

21.3. Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված ֆորս-մաժորային իրավիճակի ծանուցումից հետո՝ 3 (երեք) ամսվա ընթացքում տվյալ իրավիճակի չվերանալու դեպքում Ընկերությունը իրավունքն ունի անմիջապես լուծել սույն Համաձայնագիրը՝ կիրառելով Համաձայնագրի լուծման՝ սույն Համաձայնագրով և կիրառելի օրենսդրությամբ նախատեսված հետևանքները:

21.4. Ֆորս Մաժորային իրադարձության ի հայտ գալու դեպքում Ընկերությունը որոշում է ընդունում Ֆորս Մաժորային իրավիճակի հայտարարման վերաբերյալ, որը, հնարավորության դեպքում, հրապարակում է Ընկերության վեբկայքում: Նման որոշում կայացնելուց հետո

Ընկերությունը կարող է, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու ցանկացած ժամանակ իրականացնել հետևյալ գործողությունները՝

- I. փակել Հաճախորդների բոլոր կամ ցանկացած բաց դիրք,
- II. սառեցնել կամ կասեցնել սույն Համաձայնագրի որևէ կամ բոլոր դրույթները, որոնք Ֆորամաժորային իրավիճակից ելնելով հնարավոր չէ իրականացնել,
- III. կասեցնել կամ դադարեցնել սույն Համաձայնագրով ցանկացած կամ բոլոր ծառայությունների մատուցումը,
- IV. իրականացնել այլ գործողություններ, որոնք թույլ կտան պաշտպանելու Հաճախորդի, Ընկերության և նրա մատակարարների շահերը:

## 22. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

22.1. Համաձայնագրի նկատմամբ, ներառյալ՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքների, դադարման, առոչինչ ճանաչվելու և դրա հետևանքների, Պայմանագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման և այլ պարտականությունների առնչությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները:

22.2. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և (կամ) պահանջները, ներառյալ՝ դրանց կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման (այսուհետ միասին նաև՝ «Վեճ»)՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով: Համաձայնության չգալու դեպքում բոլոր Վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է «Օպտիմուս Լեքս» ՍՊ Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին (այսուհետ նաև՝ «Արբիտրաժային Դատարան»): Արբիտրաժային Դատարանում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան: Կողմերը հավաստիացնում են, որ տեղեկացված են Արբիտրաժային Դատարանում գործերի քննության ընթացակարգին: Արբիտրաժային Դատարանի կանոնակարգը տեղակայված է Ընկերության պաշտոնական ինտերնետային [www.optimuslex.am](http://www.optimuslex.am) կայքում: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճերի քննությունն իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն Հայերենն է, Արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը:

### 23. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 23.1. Սույն Համաձայնագիրը կարող է Ընկերության կողմից միակողմանիորեն փոփոխվել,
- I. Եթե նման փոփոխությունն անհրաժեշտ է օրենսդրական փոփոխության հետևանքով կամ
  - II. Եթե Ընկերության գնահատմամբ տվյալ փոփոխությունն անհրաժեշտ է Ընկերության և Հաճախորդի միջև սույն Համաձայնագրով հաստատված հարաբերությունների կարգավորումը առավել արդյունավետ դարձնելու համար:
- 23.2. Ընկերությունը Հաճախորդին կտեղեկացնի կատարված փոփոխությունների մասին Հաճախորդի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու և/կամ Ընկերության վեբկայքում հրապարակելու միջոցով:
- 23.3. Համաձայնագրի պայմանների փոփոխությունը իրականացվում է սույն գլխով նախատեսված կարգով նույնիսկ եթե Համաձայնագիրը ստորագրվել է Ըկերության կողմից տպագիր տարբերակով և ներկայացվել Հաճախորդին: Այս դեպքում գործող տարբերակ է համարվում Ընկերության կողմից վեբկայքում տեղադրված վերջին տարբերակը:
- 23.4. Ընկերության կողմից սույն գլխով սահմանված կարգով կատարված Համաձայնագրի փոփոխություններն ուժի մեջ կմտնեն և կգործեն դրանց վերաբերյալ Հաճախորդին էլեկտրոնային փոստի կամ Ընկերության վեբկայքում հրապարակելու միջոցով ծանուցելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե առավել երկար ժամկետ սահմանված չէ Ընկերության՝ համաձայնագրում փոփոխություններ կատարելու ծանուցման մեջ:
- 23.5. Փոփոխությունների վերաբերյալ առարկություն և/կամ անհամաձայնություն ունենալու դեպքում Հաճախորդն իրավունք ունի 22.4 կետով սահմանված ծանուցումն ստանալուց հետո լուծել սույն Համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

### 24. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 24.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում է Ընկերության կողմից Հաճախորդի դիմում հայտը հաստատելու պահից և գործում է մինչև կողմերից որևէ մեկի, կամ երկկողմանի համաձայնությամբ դադարեցնելու պահը:
- 24.2. Սույն Համաձայնագիրը կարող է Հաճախորդի նախաձեռնությամբ լուծվել այդ մասին Ընկերության՝ սույն Համաձայնագրում նշված էլեկտրոնային հասցեին առնվազն 20 (քսան) օրացուցային օր առաջ ծանուցում ուղարկելու միջոցով:



24.3. Սույն Համաձայնագիրը կարող է Ընկերության նախաձեռնությամբ լուծվել այդ մասին Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ ծանուցում ուղարկելու միջոցով:

24.4. Ընկերությունը կարող է անմիջապես լուծել սույն Համաձայնագիր հետևյալ դեպքերում՝

- I. Հաճախորդը մահացել է կամ իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անհայտ բացակայող է ճանաչվել,
- II. Հաճախորդը իրավասու մարմնի որոշմամբ սնանկ է ճանաչվել,
- III. Հաճախորդի կողմից խախտվել են սույն Համաձայնագրի դրույթները,
- IV. Ընկերությունն ունի հիմնավոր կասկածներ, որ Հաճախորդի գործողությունները վնաս են հասցնում Ընկերությանը, ներառյալ բայց չսահմանափակվելով Ընկերության Էլեկտրոնային համակարգերը,
- V. Համաձայնագրի լուծումը պահանջվում է որևէ իրավասու մարմնի որոշմամբ, կարգադրությամբ կամ այլ ակտով կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ,
- VI. Հաճախորդը ոչ հարգալից վերաբերմունք է ցույց տվել Ընկերության աշխատակիցների հանդեպ,
- VII. Հաճախորդը հրաժարվել է ներկայացնել Ընկերության կողմից պահանջված տեղեկությունները և/կամ փաստաթղթերը,
- VIII. Հաճախորդը ներկայացրել է սխալ, ոչ արժանահավատ տեղեկություններ:
- IX. Հաճախորդը, իսկ իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում՝ ընկերությունը, Հաճախորդի ղեկավար կազմի որևէ անդամ, բաժնետերը, մասնակիցը, իրական շահառուն, փոխկապակցված անձինք ընդգրկվել են որևէ պետության կամ իրավասու մարմնի սանկցիոն ցուցակում:
- X. Ընկերությանը հայտի է դարձել, որ Հաճախորդի կողմից սույն համաձայնագրի շրջանակներում ներկայացված հավաստիացումները և երաշխավորությունները չեն համապատասխանում իրականությանը:

24.5. Սույն Համաձայնագրի լուծումը ոչ մի կերպ չի ազդում դրա դադարեցման պահին Հաճախորդի՝ Ընկերության նկատմամբ առկա վճարման պարտավորությունների վրա: Հաճախորդը նաև պարտավորվում է Ընկերությանը փոխհատուցել Հաճախորդի հաշվիվների փակման արդյունքում առաջացող ծախսերը:

24.6. Համաձայնագրի լուծումից առնվազն 5 (հինգ) օր առաջ Ընկերության մոտ պահվող Հաճախորդի դրամական միջոցները պետք է փոխանցվեն վերջինիս հաշվեհամարին: Համաձայնագրի դադարեցման դեպքում բոլոր բաց դիրքերը և գործարքների հնարավորությունները փակվում են:

24.7. Սույն Համաձայնագրի լուծումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պետք է փոխանցի Ընկերության մոտ պահվող իր ֆինանսական գործիքները այլ պահառուի մոտ բացված հաշվին: Ընկերությունը սույնով պարտավորվում է Հաճախորդի տրված հանձնարարականի հիման վրա Ընկերության մոտ պահվող ֆինանսական գործիքները փոխանցել Հաճախորդի կողմից նշված հաշվին: Փոխանցման վերաբերյալ Հանձնարարականի բացակայության կամ Հաճախորդի հանձնարարականում նշված հաշվին ֆինանսական գործիքների փոխանցումը հնարավոր չլինելու դեպքում վերջիններս շարունակում են մնալ Ընկերության մոտ մինչև պատշաճ Հանձնարարականի կամ հաշվի տրամադրումը: Նման դեպքերում սույն Համաձայնագիրը շարունակում է գործել այնքանով, որքանով տարածվում է նման ֆինանսական գործիքների պահպանության վրա և վերջիններիս վրա տարածվում են Սակագներով սահմանված վճարները:

24.8. Համաձայնագրում ներառված որոշակի դրույթների անվավերությունը չի հանգեցնում բոլոր դրույթների անվավերությանը:

## 25. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ

25.1. Սույն Համաձայնագրի բնօրինակ լեզուն հայերենն է, սակայն այն կարող է թարգմանվել այլ լեզուներով: Սույն Համաձայնագրի՝ այլ լեզվով կազմված տարբերակի և հայերեն լեզվով կազմված տարբերակի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերկայությունը տրվում է հայերենին:

## 26. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐԸ

- 26.1. Հաճախորդը կարող է Ընկերության հետ կապ հաստատել հետևյալ հասցեների միջոցով՝
- I. Փոստային և փաստացի գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ, 312 սենյակ.
  - II. Հեռախոս՝ +374 (11) 48-11-11
  - III. Էլ. հասցե՝ [info@mxm.am](mailto:info@mxm.am)
- 26.2. Բրոքերային և պահառուական ծառայությունների մատուցման համար՝
- I. Հեռախոս՝ +374 (11) 48-11-11
  - II. Էլ. հասցե՝ [brokerage@mxm.am](mailto:brokerage@mxm.am)

## ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յուրաքանչյուր տեսակի ֆինանսական գործիք ունի իր առանձնահատկությունները և իր մեջ պարունակում է տարբեր ռիսկեր: Սույն ծանուցումը ներառում է տեղեկատվություն Ֆինանսական գործիքների, ինչպես նաև դրանց առևտրի հետ կապված ռիսկերի մասին և մինչև դրանցով գործարքների կնքումը, անհրաժեշտ է մանրամասնորեն ծանոթանալ դրանց ռիսկերին, արժեթղթերի շուկայում ծառայությունների մատուցման ընդհանուր կանոններին ու կանոնակարգերին: Հաշվի առնելով, որ բոլոր ռիսկերի բացահայտումը կամ թվարկումը հնարավոր չէ, այստեղ նշվել են դրանցից միայն նրանք, որոնք տվյալ պահին հնարավոր էր իդենտիֆիկացնել կամ նշել: Սույն Ծանուցումն ընդհանուր առմամբ բացատրում է Ֆինանսական գործիքներով առևտրի հետ կապված ռիսկերի բնույթը, այն նպատակ ունի օգնել Ձեզ հասկանալու Ֆինանսական գործիքի բնույթն ու ռիսկերը, ընդունել դրանք ի գիտություն և հետագայում ներդրումային որոշումներ ընդունել:

Այնուամենայնիվ՝ սույն Ծանուցմամբ չեն բացահայտվում ֆինանսական գործիքով առևտրի հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը: Հաշվի առնելով ռիսկերը՝ դուք պետք է նման գործարքներ կատարեք միայն այն դեպքում, եթե դուք հասկանում եք ֆինանսական գործիքների բնույթը, որոնցով առևտուր եք իրականացնելու: Բարձր ռիսկային ֆինանսական գործիքներով առևտուրը, ինչպիսիք են ֆյուչերսները, օպցիոնները, սվոպերը, ֆորվարդային տոկոսադրույքների համաձայնագրերը, ռեպո և այլ ածանցյալ պայմանագրերը հարմարավետ չէ հանրության մեծամասնության համար: Դուք պետք է ինքնուրույն գնահատեք, թե արդյոք ֆինանսական գործիքներով առևտուրը հարմար է ձեզ համար՝ հաշվի առնելով ձեր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները և այլ համանման հանգամանքներ:

Խնդրում ենք հաշվի առնել և գիտակցել, որ Ձեր կողմից գնված ֆինանսական գործիքի արժեքը կարող է ինչպես աճել, այնպես էլ նվազել կախված շուկայի իրավիճակից և Դուք ոչ միշտ կարող եք վերականգնել Ձեր սկզբնական ներդրումը: Նախորդ հաջողությունները չեն երաշխավորում ապագա հաջողությունները: Եթե կասկածում եք որևէ ֆինանսական գործիքի հարմարավետության մեջ, կարող եք դիմել որևէ անկախ խորհրդատուի:

### ***1. Գլխավոր ռիսկեր և Ֆինանսական գործիքներով գործարքների մասին զգուշացումներ***

Հաճախորդը զգուշացվում է հետևյալ ռիսկերի մասին

- Ընկերությունը չի երաշխավորում և չի կարող երաշխավորել Հաճախորդի ներդրումները որևէ ֆինանսական գործիքում,
- Հաճախորդը պետք է գիտակցի որ իր ներդրումների արժեքը որևէ ֆինանսական գործիքում կարող են աճել, կարող են նվազել և կարող են ընդհանրապես հավասարվել զրոյի,
- Հաճախորդն ընդունում և ստանձնում է ֆինանսական գործիքների առք ու վաճառքի արդյունքում հնարավոր վնասների ռիսկը,
- Հաճախորդը չպետք է ներդրում կատարի այնպիսի ֆինանսական գործիքներում, որոնց ռիսկերի մասին տեղյակ չէ կամ չի հասկանում,
- Ֆինանսական գործիքի գնի աճի կամ նվազման մասին նախկին տեղեկությունը չի երաշխավորում, որ ֆինանսական գործիքի գինը կշարունակի աճել կամ նվազել,
- Որոշ ֆինանսական գործիքներ կարող են չունենալ մեծ իրացվելիություն և Հաճախորդը հնարավոր է չկարողանա դրանք վաճառել կամ կարող է կրել լրացուցիչ ռիսկեր,
- Եթե ֆինանսական գործիքը գնանշվում է Հաճախորդի ռեզիդենտությունից տարբեր երկրի արժույթով, ապա արտարժույթի փոխարժեքների տատանումները կարող են բացասաբար անդրադառնալ Հաճախորդի եկամուտների վրա:
- Ածանցյալ ֆինանսական գործիքը (օրինակ օպցիոն, ֆյուչերս, ֆորվարդ, սվոպ և այլն) կարող է չունենալ սփոթ փոխանցում և կախված լինել արտարժույթի, տոկոսադրույքների, ապրանքների, բորսայական ինդեքսների կամ բաժնետոմսերի գներից:
- Հաճախորդն առանց գիտակցելու ածանցյալ գործիքների էությունը և ռիսկերը չպետք է ներդրում կատարի այդ գործիքներում,
- Արտաբորսայական գործարքների գները և բնույթը տարբեր է և դրանցով չի ձևավորվում միասնական գին և փոխանցումների հետ կապված հնարավոր են լրացուցիչ ռիսկեր,
- Որոշ շուկաներում պատվերների կատարումը կարող է լինել դժվար կամ անհնար,
- Ստոպ պատվերների տեղադրումը նախատեսված է Ձեր վնասները սահմանափակելու համար: Այնուամենայնիվ որոշ դեպքերում Ստոպ պատվերները կարող են կատարվել Ձեր սպասվածից ավելի վատ գնով և կրեք ավելի շատ վնաս, քան սպասում էիք,
- Ընկերության կամ թղթակից բանկի անվճարունակությունը կարող են ստիպել Ընկերությանը փակել Ձեր դիրքերը Ձեր կամքին հակառակ,
- Հաճախորդի եկամուտները կարող են դառնալ լրացուցիչ հարկման առարկա օրենքների և իրավական ակտերի փոփոխության արդյունքում,

- Ընկերության ներդրումային խորհրդատվությունը չի հանդիսանում որևէ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու հրավերք, բոլոր ներդրումային որոշումները ընդունում և ստանձնում է միայն Հաճախորդը,
- Չկա ոչ մի երաշխավորություն, որ ֆինանսական գործիքի առևտրով զբաղվելիս կունենաք եկամուտ: Հաճախորդը չի ստանա նման երաշխավորություն ոչ Ընկերությունից, ոչ կապված անձանցից,
- Տեխնիկական բնույթի որևէ սխալի դեպքում, այդ թվում պատվերներ մուտքագրելիս, ռիսկի պատասխանատվությունը կրում է միայն Հաճախորդը, Ընկերությունը կարող է փոխհատուցել Հաճախորդի կրած վնասները, եթե ապացուցվի, որ նման վնասները կրել է ընկերության մեղքով:
- Մինչև գործարք կնքելը Հաճախորդը պետք է ուսումնասիրի Ընկերության սակագները և այլ տեսակի հնարավոր վճարները: Եթե որևէ տեսակի սակագին անհասկանալի է, ապա Հաճախորդը կարող է լրացուցիչ պարզաբանում պահանջել Ընկերությունից:
- Ընկերության սակագները տեղադրված են Ընկերության վեբկայքում: Հաճախորդը պետք է գիտակցի, որ միջնորդավճարների չափը կարող է ազդել իր եկամուտի վրա:

### **Հաղորդակցման ռիսկեր**

- Ընկերությունը պատասխանատվություն չի կրում որևէ վնասի համար, որը առաջանում է Ընկերության կողմից Հաճախորդին ուղարկված հաղորդագրության ուշացման կամ չստացման դեպքում,
- Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի այն վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից Ընկերությանը ուղարկված չկողմավորված հաղորդագրությունները երրորդ անձանց հայտնի դառնալու պատճառով:
- Հաճախորդը ինքնուրույն է կրում Ընկերությունից ստացված հաղորդագրությունների պահպանման ամբողջ պատասխանատվությունը,
- Հաճախորդը համաձայնվում է, որ երրորդ անձանց կողմից իր անունից կատարված գործարքների ռիսկը կրում է միայն ինքը,
- Հեռախոսային խոսակցությունները ենթակա են ձայնագրման, եթե Հաճախորդը նախապես զգուշացվում է այդ մասին:

### **3. Արժեթղթերով գործարքների հիմնական ներդրումային ռիսկեր**

Հետևյալ ռիսկերը դասակարգվում են գլխավոր, քանի որ ուղղակիորեն կապված են ֆինանսական գործիքի հետ:

#### **Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը (նաև արժեթղթեր թողարկողը) հրաժարվում կամ ուշացնում է իր ստանձնած պարտավորությունների կատարումը, ներառյալ շահաբաժինների, արժեկտրոնների, մարումների գումարների վճարումը:

Վարկային ռիսկի չափը կախված է դրամական միջոցների հոսքի մեծությունից կամ ռիսկի տակ գտնվող դրամական միջոցների հոսքերի մեծությունից, դրանցից զրկվելու հավանականությունից և այն երաշխիքային գումարից (եթե երաշխիք գոյություն ունի), որը հավանաբար կստանաք, եթե գործարքի մյուս կողմը չի կատարում իր պարտավորությունը:

Վարկային ռիսկի դեպքերից են

- Երբ ներդրողը գնում է պարտատոմս, նա փաստացի պարտքով գումար է տալիս թողարկողին՝ սպասելով, որ թողարկողը ժամանակին կվճարի տոկոսագումարները և կմարի հիմնական գումարը,
- Ածանցյալ պայմանագրեր, ինչպիսիք է օպցիոնը, որի դեպքում գործարքի մյուս կողմը պարտավորություն է կրում որոշակի ժամանակ հետո վճարումներ իրականացնել,
- Երբ արտաբորսայական շուկայում ներդրողը գործարք է կնքում մյուս կողմի հետ, սպասվում է, որ գործարքի կատարման օրը գործընկերը կկատարի իր պարտավորությունները, այստեղ կա նաև փոխանցման ռիսկը, քանի որ գործընկերոջ բանկը հնարավոր է ուշացնի կամ չկատարի անհրաժեշտ փոխանցումը,

### Գնաճի ռիսկ

Գնաճը դա ապրանքների գների աճն է և հրապարակվում է որպես գնաճի մակարդակ տոկոսային արտահայտությամբ: Գնաճի բարձր մակարդակը նշանակում է արժույթի գնողունակության նվազում: Օրինակ 3% գնաճ նշանակում է, որ գները աճել են միջինը 3%-ով:

Ինչքան գնաճն աճում է, գնողունակությունն ընկնում է: Ընկնում է նաև կապիտալում ներդրումների մակարդակը, եթե գնաճի մակարդակն ավելի բարձր է, քան արժեթղթերի եկամտաբերությունը:

Գնաճային ռիսկի ազդեցություններից են.

- Գնողունակության նվազում,
- Բաժնետոմսերի և պարտատոմսերի շուկաների ակտիվացում, որը կարող է բերել տատանողականության աճի,
- Տոկոսային արժեթղթերի գների նվազում,
- Որոշ տեսակի բաժնետոմսերի շահութաբերության նվազում:

## **Շուկայական ռիսկ**

Ֆինանսական շուկայում գների տատանումից վնասներ կրելու ռիսկ: Շուկայական ռիսկերը անորոշ են և ազդում են ամբողջ արժեթղթերի շուկայի և տնտեսության վրա: Երբ շուկայական գներն ընկնում են, ակտիվների արժեքները նվազում են: Շուկայական ռիսկի առաջացման պատճառ կարող են լինել վարկային ռիսկը, փոխարկման ռիսկը, երկրի ռիսկը և տոկոսադրույքի ռիսկը:

## **Ոչ համակարգված ռիսկ**

Ոչ համակարգված ռիսկը, որը նաև անվանում են «առանձնահատուկ ռիսկ», «դիվերսիֆիկացման ռիսկ» կամ «մնացորդային ռիսկ», ընկերության կամ ճյուղի առանձնահատուկ ռիսկն է, որը կարող է հանդես գալ յուրաքանչյուր ներդրման դեպքում: Այն որոշակի ճյուղի գների փոփոխության ռիսկն է, որն առանձնահատուկ է որևէ տեսակի արժեթղթին, ոչ թե ընդհանուր շուկային, ինչը կարող է առաջանալ ֆինանսական արդյունքներից, աշխատուժի խնդիրներից, եղանակային խնդիրներից, վատ կառավարումից և այլն: Այս ռիսկը կարելի է նվազեցնել պորտֆելը լավ դիվերսիֆիկացիայի շնորհիվ, որպեսզի ռիսկի ենթարկվի միայն պարտֆելի որոշակի մաս:

## **Պետության ռիսկ**

Պետության ռիսկը նաև կոչում են «Քաղաքական ռիսկ», որը առաջանում է, որոշակի երկրում քաղաքական անբարենպաստ պայմաններ առաջանալու դեպքում: Որպես օրինակ ներդրողները կարող են կորցնել իրենց ներդրումները կամ նրանց մի մասը երկրի իշխանափոխության, սնանկության, Կենտրոնական բանկի անվճարունակության, ակտիվների պետականացման, օրենսդրական փոփոխությունների, հարկային փոփոխությունների արդյունքում:

## **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն առաջանում է, երբ ներդրողը չի կարողանում առևտուր իրականացնել որոշակի արժեթղթերով, որովհետև այն հետաքրքրություն չի առաջացնում մյուս ներդրողների համար: Իրացվելիության ռիսկի օրինակ է, երբ ներդրողը չի կարողանում վաճառել արժեթղթերը իր դիրքերը փակելու կամ վնասը ֆիքսելու համար: Իրացվելիության ռիսկի օրինակ է նաև առք ու վաճառքի մեծ սպրեդը և գնային մեծ տատանումները և կարող է լինել հետևյալ երեք ձևերով.

- Առք ու վաճառքի սպրեդ. որքան մեծ կլինի ներդրողի վնասը՝ գնելով արժեթղթերը և վաճառելով դրանք նույն պահին:



- Շուկայի խորություն. որքան շատ կկարողանան ներդրողները վաճառել կամ գնել գործող առքի կամ վաճառքի գնով՝ առանց շարժելու գները:
- Շուկայի ճկունություն. որքան ժամանակ է պահանջվում, որպեսզի իջած գները վերադառնան

### **Արժույթային ռիսկ**

Արժույթային ռիսկը կապված է միջազգային փոխանցումների հետ և առաջանում է արտարժույթի փոխարժեքի տատանումների արդյուքում: Այս ռիսկի դեպքում ներդրողը կարող է վնասներ կրել տարբեր արժույթներով գործառնությունների ժամանակ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների արդյունքում: Այն նաև առաջանում է այն դեպքում, երբ ներդրողը գնում է արժեթղթեր, որոնց արժույթը տարբեր է իր սեփական երկրի արժույթից:

Օրինակ, եթե Դուք ներդրող եք Հայաստանից և գնում եք արժեթղթեր ԱՄՆ-ի շուկայից, Դուք պետք է հասկանաք, որ ռիսկ եք կրում և արժեթղթի գնից և ԱՄՆ դոլարի փոխարժեքից: Հնարավոր է որ ԱՄՆ արժեթղթից ունեք 15% եկամուտ, սակայն այն կորցնեք ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 15% արժեզրկման պարագայում:

Նվազող փոխարժեքները բերում են արտարժույթով ներդրումների կրճատման, ինչն իր հերթին արժեթղթերի գների հնարավոր նվազման:

### **Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների մակարդակները ուղղակի ազդեցություն ունեն փողի և կապիտալի շուկայի պարտքային գործիքների գների վրա: Աճող տոկոսադրույքները բացասաբար են անդրադառնում բաժնետոմսերի և պարտատոմսերի գների վրա: Հետևաբար նվազող տոկոսադրույքները դրական ազդեցություն են ունենում բաժնետոմսերի և պարտատոմսերի գների վրա: Այսպիսով տոկոսադրույքները գլխավոր չափորոշիչն են շատ շուկաների գների համար:

Այնուամենայնիվ տոկոսադրույքները ավելի մեծ ազդեցություն ունեն պարտատոմսերի վրա, քան բաժնետոմսերի և այն բոլոր պարտատերերի հիմնական ռիսկն է: Տոկոսադրույքների բարձրացմամբ պարտատոմսերի գներն իջնում են և հակառակը: Երբ տոկոսադրույքները բարձրանում են, ներդրողների մեծ մասը վաճառում է իր պարտատոմսերը՝ ավելի բարձր եկամտաբերությամբ իրենց գումարները ներդնելու ակնկալիքով: Օրինակ 5% եկամտաբերությամբ պարտատոմսի գինը կնվազի, եթե լինի նմանատիպ այլ պարտատոմս ավելի բարձր եկամտաբերությամբ:

## Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանումներից պայմանագրային պարտավորությունների չկատարման, ֆինանսական գործիքների առևտրին անհասանելիության, գործարքների մասին տեղեկությունների չստացման ռիսկն է: Ընդհանուր առմամբ գործառնական ռիսկից հնարավոր կորուստները կարելի է դասակարգել հետևյալ կատեգորիաների մեջ.

- **Ներքին կամ արտաքին զեղծարարություն.** Կազմակերպության ներսում կամ դրանից դուրս որոշ անձանց գործողություններից կորուստներ, որոնք շրջանցում են կանոնակարգերը, օրենքները կամ Ընկերության քաղաքականությունները,
- **Ընկերության աշխատակիցների կողմից անփութություն.** Ընկերության անշխատակիցների կողմից անփութության և անգործության հետևանքով հնարավոր կորուստների առաջացում,
- **Հաճախորդներ, ծառայություններ և բիզնես պրակտիկա.** Այս դեպքում կորուստները կարող են աճել ոչ ճիշտ բիզնես պրակտիկայի արդյունքում, օրինակ՝ Հաճախորդներին անհարմար վաճառքներ, փողերի լվացում և շուկայի չարաշահում:
- **Համակարգային անջատումներ.** Սա ներառում է համակարգչի, ծրագրի, կապի խափանումներից հնարավոր կորուստները.
- **Կատարում, փոխանցում և գործառնական կառավարում.** Սա լայն կատեգորիա է, ներառում է տվյալների մուտքագրման խնդիրները, հավաքագրման խնդիրները, ճիշտ կամ ժամանակին փոխանցումները կատարելը, որը կարող է բերել հնարավոր կորուստների:

## Լեվերիջի ռիսկ

Լեվերիջի ռիսկի դեպքում ներդրողը ավելի մեծ ներդրում է կատարում քան իր ներդրված գումարն է: Այս դեպքում գների տատանումից առաջացած վնասները կարող են մի քանի անգամ գերազանցել առանց լեվերիջով գործարքների վնասները: Լեվերիջով գործարքները բարձր ռիսկային են և դրանցով ներդրումներ կատարելն ընդհանրապես խորհուրդ չի տրվում:

## Արտաբորսայական շուկայի ռիսկ

Շատ արտաբորսայական շուկաներ բարձր իրացվելի են և դրանցով փոխանցումները ավելի ռիսկային են քան բորսայական շուկաներում: Արտաբորսայական շուկաներում չկա ձևավորված միասնական գնման կամ վաճառքի գին, անգամ եթե կարողանում եք գտնել նման առաջարկ, հնարավոր է չկարողանաք գործարք կնքել առաջարկվող գնով:

## 4. Ակտիվ առևտրի ռիսկեր

Դուք պետք է զգույշ լինեք ակտիվ առևտրի մարտավարություն ընտրելուց առաջ և ծանոթանաք հետյալ դրույթներին:

Ակտիվ առևտուրը բնորոշվում է հաճախակի գնման և վաճառքի գործարքների իրականացմամբ (սվազագույնը շաբաթվա մեջ մի քանի անգամ, հաճախ բազմաթիվ անգամ մեկ օրվա ընթացքում):

**Ակտիվ առևտուրը ունի ռիսկի բարձր մակարդակ.** Ակտիվ առևտուրը սովորաբար խորհուրդ չի տրվում այն անձանց, ովքեր ունեն սահմանափակ միջոցներ կամ փորձ ու փոքր ռիսկի նախապատվություն: Դուք պետք է պատրաստ լինեք, որ կկորցնեք Ձեր բոլոր միջոցները, որոնք օգտագործում եք ներդրումներում:

**Զգուշացեք ակտիվ առևտրից մեծ շահույթներ ունենալու գայթակղությունից.** Դուք պետք է զգուշանաք խորհուրդներից, այլ անձանց հաջողությունների մասին պատմություններից, որոնք ուղղորդում են Ձեզ ակտիվ առևտրի: Ակտիվ առևտրի արդյունքում կարող եք ունենալ փոքր շահույթ կամ չունենալ շահույթ, վատագույն դեպքում կունենաք մեծ վնասներ շատ արագ:

**Ակտիվ առևտուրը պահանջում է արժեթղթերի շուկայի մասին խորը գիտելիքներ.** Ակտիվ առևտուրը պահանջում է արժեթղթերի, տեխնոլոգիաների, մարտավարությունների մասին խորը գիտելիքներ: Բացի այդ, դուք պետք է մրցեք պրոֆեսիոնալ, լիցենզավորված ներդրումային ընկերություններում աշխատող թրեյդերներ և այլ բանիմաց, փորձառու և լավ պատրաստված թրեյդերների հետ:

**Ակտիվ առևտուրը ենթադրում է ձեզ սպասարկող բրոքերային ընկերության գործառնական համակարգի խորը իմացություն.** Շատ կարևոր է ակտիվ առևտրով զբաղվելիս խորապես հասկանալ հաշիվների շարժի, առևտրի գործընթացի, պատվերների կատարման քաղաքականության մասին: Ուսումնասիրելով բրոքերային ընկերության ներքին ընթացակարգերը, էլեկտրոնային համակարգերը, Դուք կկարողանաք հասկանալ նրանց ուժեղ և թույլ կողմերը և գիտակցել սխալի հավանականության մասին:

**Ակտիվ առևտրի արդյունքում Դուք կվճարեք մեծ միջնորդավճարներ.** Դուք վճարում եք միջնորդավճար Ձեր կատարած յուրաքանչյուր գործարքի համար: Ավելի ակտիվ առևտրի դեպքում միջնորդավճարները կավելանան և կպակասի Ձեր սպասվող եկամուտը կամ կմեծանան վնասները:

**Մարժինալ ակտիվ առևտուրը կամ կարճ վաճառքները կարող են բերել Ձեր սկզբնական ներդրումից ավել վնասների.** Երբ Դուք առևտուր եք անում պարտքով վերցված միջոցներով, Դուք կարող եք կորցնել ավելի շատ քան Ձեր միջոցներով առևտրի ժամանակ:

Առևտուրը խաղ չէ: Խորհուրդ չի տրվում անփորձ կամ սահմանափակ միջոցներով ներդրողներին ներքաշվել ակտիվ առևտրում:

## **5. Ընդհանուր տեղեկություններ ֆինանսական գործիքների մասին**

### **5.1 Ի՞նչ է արժեթուղթը**

Արժեթուղթը փոխարկելի և սակարկելի գործիք է, որն ունի ֆինանսական արժեք: Արժեթուղթերի հիմնական տեսակներ են պարտքային արժեթուղթերը, ինչպիսիք են պարտատոմսերը, և բաժնային արժեթուղթերը, ինչպիսիք են բաժնետոմսերը: Արժեթուղթ թողարկող ընկերությունը կամ այլ սուբյեկտը կոչվում է թողարկողը: Հիմնական արժեթուղթից են բաժնետոմսերը, պարտատոմսերը, ներդրումային ֆոնդերի փայերը, օպցիոնները, վարանտները և ածանցյալ գործիքները ու կարող են վաճառվել ֆինանսական շուկաներում, ինչպիսիք են ֆոնդային բորսաները:

### **5.2 Ինչ է ածանցյալ գործիքը**

Ածանցյալ գործիքը ֆինանսական պայմանագիր է, որի գինը կախված է մեկ կամ մի քանի այլ գործիքներից: Դրանք կոչվում են ածանցյալ գործիքի հիմքում ընկած ֆինանսական գործիք, որոնք կարող են լինել բաժնետոմսեր, պարտատոմսեր, ապրանքներ կամ թանկարժեք մետաղներ, արտարժույթ, տոկոսադրույքներ և ինդեքսներ:

Օրինակ բաժնետոմսի օպցիոնի հիմքում ընկած է բաժնետոմս: Կան տարբեր տեսակի ածանցյալ գործիքներ, այդ թվում ֆյուչերսներ, օպցիոններ, սվոպներ և կառուցվածքային գործիքներ:

### **5.3 Բաժնետոմսեր**

Բաժնետոմսը բաժնետիրոջը իրավունք է տալիս մասնակցել ընկերության ղեկավարմանը: Մեկ բաժնետոմսը կազմում է ընկերության կապիտալի որոշակի մասը: Բաժնետերը հանդիսանում է ընկերության համասեփականատերը:

Հասարակ բաժնետոմսերում ներդրումն իրավունք է տալիս ձայնի իրավունքով մասնակցելու ընկերության ժողովներին և նրանից եկամուտները կամ վնասները չեն կարող կայուն լինել:

Շահաբաժինը դա ընկերության շահույթի բաշխումն է բաժնետերերի միջև: Շահաբաժնի չափը նաև անվանում են բաժնետոմսի եկամտաբերություն:

Բաժնետոմսերի ներդրումներից մյուս եկամուտը կարող է լինել դրանց շուկայական գնի աճից:

#### **5.3.1 Բաժնետոմսերի տեսակներ**

Ընկերությունը կարող է ունենալ տարբեր տեսակի բաժնետոմսեր: Դրանց մի քանի տեսակներ ներկայացված է ստորև.

**Հասարակ բաժնետոմսեր.** առանց հատուկ իրավունքի ստանդարտ բաժնետոմսեր: Բաժնետիրոջը իրավունք է տալիս մասնակցել ընկերության ընդհանուր ժողովներին, քվեարկել որոշումներ կայացնելիս իր ունեցած մասնաբաժնի չափով: Նրանք ունեն մեծ եկամուտներ ապահովելու հեռանկար, սակայն ունեն մեծ ռիսկ, հատկապես սնանկության ժամանակ կամ ընկերության մեծ վնասների ժամանակ շահաբաժին չեն ստանա: Բաժնետոմսի գինը նաև նշանակում է ընկերության տնտեսական արժեքը: Ընկերության սովորական բաժնետերերը համարվում են չպաշտպանված վարկատուներ:

**Արտոնյալ բաժնետոմսեր.** տալիս որոշակի արտոնյալ իրավունքներ ի տարբերություն սովորական բաժնետոմսերի: Հաճախ այդ իրավունքները վերաբերվում են շահաբաժիններ ստանալուն և ընկերության դե

պքում վճարման նախապատվության իրավունք:

**Կուտակային արտոնյալ բաժնետոմսեր.** եթե առաջին տարին բաժնետիրոջը շահաբաժին չի վճարվում, այն գումարվում է հաջորդ տարիներին:

**Մարման ենթակա բաժնետոմսեր.** բաժնետիրոջ հետ ընկերությունը պայմանագիր է կնքում, որ մի քանի տարի անց հետ կգնի բաժնետոմսերը:

### 5.3.2 Ռիսկեր

Հիմնական ռիսկերը շուկայական ռիսկն է կամ համակարգային ռիսկը, որը չի կարող դիվերսիֆիկացվել այլ վայրում, և ոչ համակարգային ռիսկը, որը կարող է մեծանալ կամ նվազել պորտֆելի դիվերսիֆիկացիայի արդյունքում, այդ թվում վարկային ռիսկը, երկրի ռիսկը, իրացվելության ռիսկը, փոխարկման ռիսկը և անուղղակի տոկոսադրույքի ռիսկը:

### 5.4 Պարտատոմսեր

Պարտատոմսերը պարտքային գործիքներ են, որոնց թողարկողները դրանց միջոցով փող են ներգրավում շուկայից: Կարճ ասած ներդրողները պարտքով գումար են տալիս ընկերությանը, փոխարենը ընկերությունը պարտավորվում է սահմանված հաճախականությամբ վճարել տոկոսագումարներ (արժեկտրոն կամ կուպոն) և մարման ժամանակ վերադարձնել հիմնական գումարը: Պարտատոմս գնողն ունի պահանջ թողարկողի նկատմամբ, բայց ոչ կառավարմանը մասնակցելու իրավունք, ինչպես բաժնետոմսերի դեպքում:

Պարտատոմսի անվանական արժեքը և արժեկտրոնի տոկոսադրույքը նախօրոք հայտարարվում են թողարկողի կողմից, սակայն շուկայում այն կարող է շրջանառվել այլ եկամտաբերությամբ և գինը կարող է անվանականից պակաս կամ ավել լինել: Պարտատոմսի երկարությունն նշանակում է մինչև մարում ընկած ժամանակի միջուկները, որը կարող է մեկ տարուց պակաս լինել դրմական շուկայի գործիքների դեպքում և մեկ տարուց ավել պարտատոմսեր: Ըստ ժամկետայնության ԱՄՆ-ի գանձապետական արժեթղթերը բաժանվում են երեք խմբի.

- Կարճաժամկետ (bills). մինչև մեկ տարի ժամկետայնությամբ
- Միջնաժամկետ (notes). մեկից տասը տարի ժամկետայնությամբ
- Երկարաժամկետ (bonds). տասը տարուց ավել ժամկետայնությամբ

**Արժեկտրոն.** տոկոսադրույք, որը թողարկողը վճարում է պարտատերերին: ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում, Եվրոպայում և Հայաստանում սովորաբար արժեկտրոնները վճարվում են ամեն կիսամյակ:

**Հետզնման իրավունք.** թողարկողը իրավունք է տալիս պարտատերերին հետ վաճառել իրենց պարտատոմսերը մարման օրվանից շուտ: Այսպիսի պարտատոմսերի թողարկողներից շատերը հետ են գնում պարտատոմսերը անվանական արժեքով: Որոշ պարտատոմսերի համար թողարկողը ստիպված է լինում վճարել հավելավճար: Սա հիմնականում բարձր եկամտաբերությամբ պարտատոմսերի դեպքում է:

#### 5.4.1 Պարտատոմսերի տեսակներ

Ըստ թողարկողի պարտատոմսերը լինում են տարբեր տեսակի (պետական պարտատոմսեր, մունիցիպալ պարտատոմսեր և կորպորատիվ պարտատոմսեր): Կորպորատիվ պարտատոմսերը բնորոշվում են ավելի բարձր եկամտաբերությամբ, քանի որ ընկերության սնանկության հավանականությունը ավելի մեծ է քան պետությանը: Կորպորատիվ պարտատոմսերը կարող են ավելի մեծ եկամտաբերություն բերել, քանի որ ներդրողը ռիսկի է գնում, երբ գնում է դրանք: Կարևոր է նաև թողարկող ընկերության վարկանիշը: Որքան բարձր է ընկերության վարկանիշը, այնքան ցածր է նրա թողարկած պարտատոմսերի եկամտաբերությունը:

**Պետական պարտատոմսեր.** Պետության կողմից թողարկված պարտատոմսերը նաև անվանում են գանձապետական պարտատոմսեր: Գանձապետական պարտատոմսերը համարվում են անեմասնվտանգ պարտատոմսերը, քանի որ թողարկողը պետությունն է և նրա դեֆոլտ լինելը քիչ հավանական է: Այնուամենայնիվ գանձապետական պարտատոմսերը սովորաբար ունենում են երկար ժամկետ և ավելի զգայուն են գնաճի և վարկային ռիսկի դեպքում:

**Մունիցիպալ պարտատոմսեր.** մարզային կամ տեղական համայնքային պարտատոմսեր: Դրանք թողարկվում են մարզային բյուջեների ծախսերը հոգալու նպատակով կամ հատուկ նախագծերի ֆինանսավորման համար: Մունիցիպալ պարտատոմսերն ավելի ռիսկային են քան պետականները:

**Կորպորատիվ պարտատոմսեր.** Կորպորատիվ պարտատոմսեր թողարկում են մասնավոր կազմակերպությունները: Կորպորատիվ պարտատոմսերը կարող են ունենալ տարբեր մարման ժամկետներ: Նրանք համարվում են այս երեք տեսակից ամենառիսկայինը, քանի որ նրանց վարկային ռիսկը մեծ է, ինչը շատ դեպքերում փոխատուցվում է բարձր եկամտաբերությամբ: Ցածր վարկանիշ ունեցող ընկերությունների կողմից թողարկված պարտատոմսերը սպեկուլատիվ պարտատոմսեր են և նրանց հաճախ անվանում են «ոչ պետքական պարտատոմսեր»:

**Փոխարկելի պարտատոմսեր.** պարտատոմսեր, որոնք կարող են փոխարկվել այլ կորպորատիվ արժեթղթի, հիմնականում սովորական բաժնետոմսերի: Փոխարկումները հիմնականում կատարվում են հատուկ նախատեսված օրերին հատուկ սահմանված գներով և պայմաններով: Դրանք թույլ են տալիս ընկերությանը կրճետել իրենց պարտավորությունները:

**Տիքսված տոկոսով պարտատոմսեր.** արժեթղթի շրջանառության ողջ ընթացքում անփոփոխ արժեկտրոնով պարտատոմսեր:

**Լողացող տոկոսով պարտատոմսեր.** ունեն փոփոխվող տոկոսադրույքով արժեկտրոններ, որոնց մեծությունը կախված է այլ տոկոսադրույքից, ինչպիսիք է Լիբորը կամ Եվրիբորը:

**Զեղչատոկոսային պարտատոմսեր.** Զիղչատոկոսային պարտատոմսերը չունեն արժեկտրոնի վճարումներ, թողարկվում են անվանական արժեքից ցածր, մարվում են անվանական արժեքով:

**Գնաճի մակարդակին կցված պարտատոմսեր.** երբ պարտատոմսերի եկամտաբերությունը կապված է գնաճի հետ:

**Ակտիվներով ապահովված արժեթղթեր.** այն պարտատոմսերն են, որոնց արժեկտրոնի կամ մարման գումարի վճարն ապահովված է այլ ակտիվով: Ապահովված արժեթղթերի տեսակներ են հիպոթեքային պարտատոմսերը, ապահովված պարտքային արժեթղթերը:

**Ստորադաս պարտատոմսեր.** այն պարտատոմսերն են, որոնք ունեն ավելի ցածր առաջնահերթություն քան այլ պարտատոմսերը թողարկողի սնանկության դեպքում: Ստորադաս պարտատոմսերի պարտավորությունները կմարվեն մյուս բոլոր պարտատոմսերի պարտավորությունները մարելուց հետո: Ստորադաս պարտատոմսեր



հիմնականում թողարկում են բանկերը, դրանց օրինակներից է ակտիվներով ապահովված պարտատոմսերը:

**Անժամկետ պարտատոմսեր.** որոնք չունեն մարման ժամկետ:

**Ըստ ներկայացնող պարտատոմսեր.** պարտատոմսեր, որոնք անվանական չեն: Այլ խոսքերով, այն պատկանում է պարտատոմսի փաստացի ներկայացնողին: Հաճախ դրանք լինում են թղթային և մարվում են կանխիկով: Ըստ ներկայացնողի պարտատոմսերը բարձր ռիսկային են, քանի որ այն կարող են կորցնել կամ գողանալ:

### 5.4.2 Պարտատոմսերի վարկանիշներ

Ստանդարտ և Փուրզը (Standard & Poor’s) ու Մուդիսը (d Moody’s) կառավարություններին և ընկերություններին տրամադրում է վարկունակության վարկանիշներ: Դեֆոլտային ռիսկից բարձր վարկանիշները ներկայացված են ներքևի աղյուսակում: Հիմնականում բարձ եկամտաբերությամբ պարտատոմսերն ունենում են համեմատաբար ցածր վարկանիշ: Մյուս կողմից այլ հավասար պայմաններում ավելի բարձր վարկանիշ նշանակում է ավելի ցածր եկամտաբերություն:

Թողարկողի վարկանիշ նշանակում է հավանականությունը, որ ներդրողները հետ կստանան իրենց գումարը: Այն կարող է կաճված լինել բազմաթիվ գործոններից:

Quality	Moody’s	Standard & Poor’s
Highest Quality	Aaa	AAA
High Quality	Aa1, Aa2, Aa3	AA+, AA, AA-
Upper-medium grade	A1, A2, A3	A+, A, A-
Medium grade	Baa1, Baa2, Baa3	BBB+, BBB, BBB-
Somewhat speculative	Ba	BB
Speculative	B	B
Highly speculative	Caa	CCC
Most speculative	Ca	CC
Default	C	D

### 5.4.2 Ռիսկեր

Պարտատոմսերով առևտուրը ոչ միշտ է հարմարավետ ներդրողների համար: Հաճախ պարտատոմսերն անվանում են պահպանողական գործիքներ, սակայն նրանք ունեն

բազմաթիվ ռիսկեր: Եթե Դուք չեք ընդունում ներքոնշյալ ռիսկերը, ավելի լավ է պարտատոմսերով գործարքներ չկնքեք:

Վարկային ռիսկ. Երբ դուք գնում եք կորպորատիվ պարտատոմս, դուք պարտքով գումար եք տալիս ընկերությանը: Միշտ գոյություն ունի ռիսկ, որ ընկերությունը չի կարողանա մարել պարտքը, երբ սնանկ ճանաչվի: Այս ռիսկի մասին Դուք միշտ պետք է գիտակցեք: Ռիսկը ներառված է պարտատոմսի գնի մեջ:

Ժամանակից շուտ մարման ռիսկ. Ժամանակից շուտ մարման ռիսկը հանդես է գալիս, երբ թողարկողը հետ է կանչում պարտատոմսը: Երբ այն տեղի ունենա, գումարը կվերադարձվի ժամանակից շուտ: Սովորաբար պարտատոմսերը լինում են հետ գնելի կամ ոչ, այս տեղեկությունները գրված են լինում ազդագրում: Եթե պարտատոմսը հտ գնելի է, պա նշվում է հետ գնման պայմանները: Ընկերությունները սովորաբար հետ են գնում պարտատոմսերը, երբ շուկայական տոկոսներն իջնում են:

Գնաճային ռիսկ. Գնաճային ռիսկը հանդես է գալիս այն ժամանակ, երբ գնաճի մակարդակն ավելի բարձր է քան պարտատոմսի եկամտաբերությունը: Այլ խոսքերով եթե գնաճը վեց տոկոս է, իսկ պարտատոմսի եկամտաբերությունը չորս տոկոս, դուք կստանաք չորս տոկոս եկամտաբերություն, սակայն իրական փողի արժեքով կունենաք երկու տոկոս անկում:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքի փոփոխությունը պարտատոմսի շրջանառության ժամանակ կարող է ազդել դրա գնի վրա: Երբ տոկոսադրույքները բարձրանան, պարտատոմսի գները կիջնեն, իսկ նոր թողարկվող պարտատոմսերը կվաճառվեն ավելի բարձր եկամտաբերությամբ: